Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
V2194

1999

ՍԻԼՎԻՈ ՓԷԼԼԻՔՈՅԻ

ՀՌԻՄԻՆԻԱՑԻՆ ՓՐԱՆԿԻՍԿԷ

(Ֆրանչէսկո դա Ռիմինի)

ԴԱՆԹԷԻ ԾՐԱՆԶԻՍԿԱՆ ԼԻՕՓԱՐԴԻ ԱՌ ԻՏԱԼԻԱՆ

ՑԱՐՕՆՈՑ ԴՊՐԻ

Ա. Մ. Գ.
ԳԳԻՄԻՆ ՅԱՐՄԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ՍԻ ԸՆԿ.

1880

ՀՌԻՄԻՆԻԱՅԻՆ ՓՐԱՆԿԻՍԿԷ

(Ֆրանչէսկա դա Ռիմինի)

ՍԻԼՎԻՈ ՓԷԼԼԻՔՈՅԻ

ԴԱՆԹԷԻ ՅՐԱՆՉԻՍԿԱՆ
ԼԷՕՊԱՐԴԻ ԱՌ ԻՏԱԼԻԱՆ

ԳՐՅԱՐՈՆՈՑ ԾԵՐԸ

Ա. Մ. Ե. Գ.

Տփխիս

Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԱՑ ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1880

1604.
ԼԷՕ Գ. ԴԱՐԻՔ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР

Дозволено цензурою, 20 Февраля 1880 года.

գ 2194-ա
2գ 2198

Ա.ռ աղնուափիտ պատանին

ՑԱՐՈՒԹԻՒՆ Մ.—ՍԻՄԷՕՆԵԱՆ

ԲԱՐՍԱՄԵԱՆՑ:

Ցակաւին պատանի՝ յօժար ես բարերարել, և գիտես ուր բաշխել բարին։ Շնորհապարտ սրտով նուէր եմ բերում Անուանդ սոյն գրաւոր վաստակը, ուր ես միայն Թարգման եմ կացել Առաքինի Մարդոց զգացմանցը. ուստիւ համարձակ անում եմ դոյն նուէրը։

Գալով վերջումը զետեղուած իմ աղքատիկ տողերուս, յոյս ունիմ թէ ներողամտաբար կ'ընդունուին նաև այնոնք։ Աղքատ են, արդարև, վասնորոյ այրի կնոջ լումայի բաղդը կը մաղթեմ իրենց համար։

Ա. Մ. Եղիազարեան
(Գրոյեանց)։

Տփղիս. 22 փետր. 1880

ԼԷՕՔ
ԳՐԱԴԱՐԱՆ

FRANCESCA DA RIMINI

Հռիմինիացին Փրանչիսկէ:

Կարդում էինք աւուր մէկը, առ հեշտի,
Թէ սէրն ինչպէս Լանչիլոտին կապկապեց.
Միայն էինք եւ առանց մի կասկածի:
Այդ կարդմունքը մեր աչերը շատ անգամ
Հրապուրեց, եւ գունատեց երեսներս,
Բայց մէն մի կէտ եղաւ մեզի յաղթողը:
Երբ կարդացինք թէ խանդակաթ ժըպիտը
Համբուրուեցաւ այնքան սիրող սիրեկնէ,
Սա որ ինձէն բաժանուելու չէ երբէք,
Դողդողալով համբուրեց իմ շրթունքը:

Դանթէ, Դժ., Ե:

ԱՆՁԻՆՔ

ԼԱՆՁԻՈՏՏՈ, *Հռիմինիի տէր։*
ՓԱՕԼՈ, *իւր եղբայրը։*
ԳՈՒԻԴՈ, *Հռաւեննայի տէր։*
ՓՐԱՆԿԻՍԿԷ, *իւր աղջիկը և Լանչիոտտոյի կինը։*
ՄԻ ՍՊԱՍԱՒՈՐ
ՊԱՀԱՊԱՆՔ

Տեսարանը Հռիմինիումն է, իշխանական ապարանքի մէջ։

Հռիմինիացին Փրանկիսկէ

ՀԱՆԴԷՍ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻԼ Ա.

ԼԱՆՁԻՈՏՏՈՆ *դռան է փակէ իւր սենեակէն* ԳՈՒԻԴՈՒՆ *դիմաւորելու, որ դէպ է մտնում։ Սիրալիր գրկում են իրար։*

Գ. Ուրեմն այդպէս, նա ինձ տեսնել էր ուզում։
Իսկոյն Թողի Հռաւեննա. ինձ համար
Աղջկան սէրը վեր է քան դահն աշխարհի։
Լ. Ա՛խ, Գուիդո, որքան տարբեր ես տեսնում
Դու իմ պալատն ամուսնութեանս օրուանից.
Է՛լ չեն խընտում Հռիմինիի ճամբընեարն
Երգ ու պարի անուշ ձայնով. այլ ոչ ոք
Ինձ չէ ասում թէ աշխարհքումս երջանիկ
Լանչիոտտի պէս էլ չը կայ թագաւոր։
Այժմ արժանի եմ խրդճալու. մինչ յառաջ՝
Ամէն իշխան Իտալիոյ նախանձում
Էր իմ վերայ։ Մի ժամանակ Փրանկիսկէ
Գեղեցկութեամբն ու մի թեթև տըխրութեամբ,
Որ աւելի երկնանըման անում էր

Իւր կերպարանքն, հրապուրում էր ամէն սիրտ։
Շատերն այնպէս էին կարծում որ դեռ նոր
Իւր հայրենի տընէն ջոկուած լինելը
Եւ ամօթխած բարքը ծաղիկ հասակի՝
Որ քաշուում է հարսանեկան բերկրանքէ
Եւ փաղաքուշ դըրուատներէ ու գնահէ,
Միակ պատճառ են իւր սրտի տըրտմութեանն։
Բայց վերջապէս ժամանակըն երթալով
Այնպէս կարծես թէ փարատեց այդ վիշտը։
Փըրանկիսկէ իւր փեսային զուարթ աչքով
Նայիլ ըսկսաւ. մենութենէ խորշեցաւ.
Դորովալից կարեկցութեամբ լըսում էր
Թըշուառներու քաշածները և ըստէպ
Ինձ պատմում և՝ Սիրում եմ քեզ, ասում էր,
Որ դու արդար և ողորմած իշխում ես։

Գ. Լացըս բերիր։ — Ա՛խ, երբ տըղայ էր նա դեռ,
Աշխոյժ՝ կայտառ՝ տեղնուտեղը ժըպիտ էր.
Ծաղկանց մէջը երբ վազվըզում խաղում էր,
Աշխարհի կեանքն իրեն կարծես տըրուած էր.
Հաղորդում էր նա իւր վըրայ նայողին՝
Իւր վառ աչքէն՝ նոր տարիքի ցոլ կայծը։
Ո՞վ իւր մըտքէն անց կըկացնէր որ յանկարծ
Այնքան ուրախ սրտի ճրագը չիջանէր,
Ու չիջանէր ցաւի փըչման ըսկըզբէն։
Պատերազմը..—վայ ինձ, սպանողյիշատակ...—
Խլեց Նորանից սըրտով սիրած եղբօրը.
Նա անդադար պաղատում էր Աստուծուն
Որ իւր կըռուող եղբօր կեանքը պահպանէ...

Լ. Անմըխիթար՝ իւր եղբօրը կորըստով,
Ապրում է նա ու սպանողէն դարշում է.
Այնքան զըթոտ և այնքան հեզ հոգի է,
Բայց և այնպէս՝ ասել գիտէ մահու չափ։
Զուր ասում եմ ես Նորան. Մեր հայրերը
Իրարու հետ կըռուում էին, և Փաւլօ
Իմ եղբայրըս քո մի եղբօրն ըսպանեց,
Բայց ըսպանեց կըռուի միջում. շատ ցաւ է
Նորա համար որ սպանեց. նա ունի
Թէ գեղեցիկ թէ մարդասէր ըզգացմունք,
Վայել հոգու ազնըւասիրտ ասպետի։
Բայց որ լըսում է Փաւլի անունը
Վըրդովուում է։ Ես ախ ու վախ եմ անում
Իմ հեռաւոր եղբօրըս խիստ կարօտովն։
Իմացայ որ յետ է գալու հայրենիք,
Սիրտըս թընդաց ուրախութեամբ. ամուսնիս
Ասացի այդ, պաղատեցի խընդրեցի
Որ ընդունի Նորան սիրով. բայց մի ճիչ
Նա արձակեց այդ լուրն ինձնից լըսելիս։
Ցետ է գալիս. աղաղակեց սոսկալով
Ու ընկաւ վայր կիսակենդան։ Ա՛խ, ասեմ.
Կարծեցի թէ հոգին տըւեց. երդուեցայ
Մոլեգնոտած, որ իւր մահու վըրէժը
Անչուշտ հանեմ. . . իմ հարազատ եղբօրէս։

Գ. Ո՛հ. և կըրցար...

Լ. Կորչի երդումն ամբարիշտ։
Նա իմ բերնէս լըսելով այդ, դողալով
Ձեռքը դէպ ինձ երկընցնելով, Երդուիր, ոհ,

Երդումիր, գոչեց, սիրել Նորան. Նա միայն՝
Երբ ես անցնիմ՝ կը մնայ ցաւիդ ցաւակից . . .
Անգութն հարկում է ինձ սիրել, ինքն ատում,
Եւ Հռաւենննա, իւր հայրենի պալատը
Երթալ ուզում, որ չը տեսնէ իւր աչքով
Իւր եղբօրն ըսպանողի երեսը։

Գ. Գիրքդ ձեռքըս հասնելուն պէս՝ վախեցայ,
Զլինի արդեօք թէ հիւանդ է. ախ, գիտես
Ո՛րքան սիրում եմ ես Նորան, ու դողում
Թէ մի գուցէ երկար ապրիմ... գիտես ինչ. . .

Լ. Ո՛վ, մի ասեր... Ես էլ, երբ որ տեսնում եմ
Նորան նիրհած... և փակ արտեւանունքը
Ու լոյս դէմքը կեանքի նշան չեն տալիս,
Տագնապով լիք՝ շրթունքըս իւր շրթունքին
Դընում եմ որ, թէ շընչում է, իմանամ.
Եւ քո սարսռով սարսռում եմ։ Կամեցայ
Խաղ ու խընտումի մէջ պահել, ձանձրացաւ.
Գոհարներով, իշխանութեամբ ու ոսկով
Ճոխացընել աշխատեցայ, անօգուտ.
Շընորհակալ եղաւ բայց ոչ ուրախցաւ։
Աստուածասէր է, ուստի նոր տաճարներ
Շինել տըւի, ուր բիւր կոյսեր ամէն ժամ
Աղօթում են Նորա համար՝ որ նոցա
Պաշտպանում է ու սիրալիր զորովում։
Նըշմարում է ջանքըս՝ իրեն դուր գալու,
Ինքն իսկ ասում է այդ ինձ ու լաց լինում։ —
Մերթ էլ մի չար կասկած սիրտըս տանջում է.
Զլինի ունիմ ինձ նախանձորդ ...։ Բայց չէ՞ որ

Ողջ իւր անձէն փայլում է սիրտն անմեղ, սուրբ...
Ահա նա է։

—

ՏԵՍ. Բ.

ՖՐԱՆԿԻՍԿԷ ԵՒ ԱՌԱՋԻՆԳՆ։

Գ. Արէ, որդեակ, գիրկս, ես եմ։

Փր. Հայր... ձեռքդ տուր համբոյրներովըս ծածկեմ։

Գ. Գիրկը, որդեակ. այստեղ խառնէ՛ քու սըրտիդ
Բաբախումներն իմոնցըս հետ... Ե՛կ, իշխան.
Երկուսդ ես էք իմ որդիք, գիրկս երկուսդ էլ...
Երկնի օրհնէնքը ձեր վերայ։ Այսպէս ես
Ձեզ իմ գըրկումըս սեղմեցի երկուսիդ,
Այն օրըն որ դուք ամուսին կոչուեցաք։

Փր. Ա՛խ. այն օրըն... դու երջանիկ եղար, հայր։

Լ. Ասել կուզես թէ հօրդ արիր երջանիկ,
Բայց քեզ թըշուառ։

Փր. Վրկայում էր սիրտս ըստոյգ,
Որ մըշտահոս արտասուքովըս միայն
Պիտ՝ ամուսնիս վըրդովէի ես սիրտը։
Ասացի էլ թէ հարսնութեան ես, հայրիկ,
Զունիմ փափագ, ու քեզնէ քոզ խընդրեցի,
Դու ասացիր թէ միակ իմ հարսնիքըս
Քեզ բաղդաւոր կ՝անէր, և ես լըսեցի։

Գ. Բայց դու, անգութ, քոզ ուզեցիր այն հօրէն,
Որին միայն զաւակ մնացիր մէկ հատիկ։
Մինթէ մերժել կարող էիր ծեր հօրդ
Մի օր որդի ունել ծընկին իւր որդուց։

Փր. Ա՛խ, իմ ցաւըս ինձ համար չէ։ Իմ սըրտիս

Աստուած անբուժ վէրք է տրուել ծանրավիշտ,
Եւ ես իսպառ միտքս եմ դրել համբերել։
Մշտահոսան արտասուքով տարիներս
Կ'ողողէի եւ անծանօթ մի խրցում
Բոլորովին այնպէս՝ ինչպէս աշխարհում.
Բայց իմ ցաւով ուրիշին ցաւ տալ չէի. . .
Սրտէս աղատ հառաչանքն կ'ելնէին
Աստուծոյ մօտ, որ զբթալով իւր անբաղդ
Արարածի վերայ՝ նորան կը հանէր
Սոյն այս ցաւոց հովիտէն ... Սակայն չէ,
Մեռնիլ ցանկալ ես չեմ կարող։ վիշտ է քեզ,
Աղնըւասիրտ փեսայ, գիտեմ, ապրիլս էլ,
Բայց աւելի կը տրրորուիս թէ մեռնիմ։

Լ. Ո՛վ դու զբթոտ, նոյն և անգութ, վիշտ տուր ինձ,
Լից դառնութեամբ բոլոր ժամերս, միայն ապրիր։

Փր. Շատ ես սիրում. բայց վախում եմ միշտ չընի
Ատելութեան փոխես սէրդ, ու... ինձ պատժես...
Իմ չունեցած մեղքիս համար... կամ անկամ
Մեղքի համար։ . .

Լ. Ինչ մեղք։

Փր. Որ քեզ թոյլ կերպով
Սէր եմ յայտնում։

Լ. Ըզդում էլ ես։ Ա՛խ, ասել
Չէի ուզում քեզ՝ արդ մրտքէս անցածը։
Կուզենայիր, բայց, ո՜հ. սիրել չես կարող...

Փր. Ի՞նչ ես կարծում։

Լ. Քեզ վատ ես չեմ համարում...
Մարդուս կրքերն ակամայ են շատ անդամ...

Փր. Ի՞նչ։

Լ. Թողութիւն։ Ո՛վ կին, կրկին ասում եմ,
Վատ համարել՝ քեզ վատ ես չեմ համարում.
Բայց մի գուցէ ցաւը յառաջ է գալիս. . .
Անուրբ սիրոյ դէմ սուրբ հոգուդ մրրցելէն։

Փր. Հայր, պաշտպանէ անունս, ասա՛ իրեն դու,
Եւ երդուեցուր, որ անարատ ես օրեր
Անց կացուցի քու կողքիդ և իւր կողքին
Չէի կարծում թէ ստուերն անդամ կասկածի
Տրուած լինիմ։

Լ. Ներողութիւն. սէր՝ դարբին
Է կասկածի։ — Ես իսկ ասում էի ինձ.
Եթէ, մանուկ նա տակաւին, սուրբ սիրով
Բորբոքուած էր, և արդ լրուն փայփայում
Է յիշատակն ինձ մի ոսոխ տարփածուի,
Որից սակայն վեր է դասում իւր պարտքը,
Ի՞նչ իրաւունք է ինձ վէրքն արծարծել՝
Իմանալով իւր ծածուկը, որ թէ կայ՝
Թող յաւիտեան անմեղ սրրտում մնայ թաղուած։
Չիտեմ ասեմ. կասկածանքս չատացաւ
Երբ եղբօրդ մի օր գովեստ հիւսելով,
Սիրտդ ըսփոփել էի ուզում։ Դու անյաղթ
Ըզդացմունքով յափրչտակուած՝ կանչեցիր.
Ո՛վ իմ սրրտիս սերտ բարեկամ, ուր ես, ա՛խ.
Ո՞ւր զընացիր։ Ինչո՞ւ էլ յետ չես գալիս,
Որ չը մեռած՝ մի հեղ էլ գէթ քեզ տեսնեմ։

Փր. Ե՞ս ասացի։

Լ. Եւ այդ խօսքը չէր թրուում

Եղբօրդ ուղղուած։

Փր. Ցընորքի մէջն էլ անգամ
Թռչուառներու գաղանիքն ուզում են բռնել.
Հերիք չէ այն որ թռչուառ են, դեռ դարձեալ
Վատահամբաւ էլ պիտ՝ լինին։ Ամէն մարդ
Նոցա ցաւած հոգու դէմ դաւ է ղընում.
Եւ կեղծելով... գութ՝ խեղճերուն ատում են...
Պէտք չէ գութ, ո՛չ. այլ գերեզման են խնդրում...
Վերջապէս երբ անտանելի թըւիմ քեզ,
Բայց գերեզման, կիջնիմ այնտեղ խընդութեամբ.
Ո՛հ. խընդութեամբ՝ միայն թէ , . . . փախչիմ
(մարդկանցից։

Գ. Ցընորու�՝ եա։ Որդեակ. . .

Լ. Այդ ինչ սոսկալի
Վերաս հայեացք ես ձըգում, քեզ ինչ արի։

Փր. Աղէտներուս միթէ պատճառը դու չես...
Ինչու հանիր ինձ այն երկրէն, որ իւր ծոց
Պահում է մօրս ոսկորները. ինձ այնտեղ
Ժամանակը մեղմել կուտար իմ ցաւրս.
Ատ ամէն բան միչտ զայրացնում, նորոգում...
Քայլ չեմ փոխում որ չը յիշեմ... Ո՛ անմիտ.
Ինձնից դուրս եմ։ Ըընտատաս, չէ։

Լ. Հռաւենննա,
Փըրանկիսկէ, կ՝երթաս, այո, ծնողիդ հետ։

Գ. Կաց, իշխան։

Լ. Ո՛հ. հըրաժարուում եմ ահա
Իրաւունքէս։ Ո՛չ, այլ չեմ գալ քեզ կըրկին
Հայրենիքդդ հանել բերել։ Նա, որից

Դու խորչում ես, որ փեսադ է, և այնքան
Քեզ սիրում է, նորան կըրկին չես տեսնիլ...
Բայց եթէ դու մի օր ինքդդ զըղջալով
Ու ցաւելով՝ դառնաս դէպ խեղճ ամուսինդ ...
Ա՛խ, և դուցէ այլակերպուած զրտնելով
Ինձ վըշտերէս, չը ճանաչես այլ նրա։
Բայց ես, սըրտումըս քեզ կենդան պահելով,
Անյիշաչար կը վազեմ քեզ ընդ առաջ։

Փր. Լանչիոթթո, լաց ես լինում։

Գ. Ա՛խ, դստրիկ։

Փր. Հայր իմ։—Ցեսաք ինձ նրման վատ դուստրը մի,
Ապաչընորհ կին ինձ նրման։ Ամպարիշտ
Խօսքեր ցաւիցըս թռչում են բերանէս,
Բայց լոկ չըրթունքս արտաբերող են նոցա։

Գ. Ո՛հ. մի կարճեր հօրդ օրերըն, Լանպերտուղ
Առաքինութիւնը թողներ ամուսնիդ,
Որի համար երկինք նորան չնորհում էր
Արժանաւոր ու պաչտելի կենակից։
Գերեզմանիս հողն աւելի ինձ թեթև
Պիտի թըւի թէ օր մի դաս ու ձեռքդդ
Դնելով վերան ասես երդմամբ որ սիրովդ,
Որդիներովդ՝ ուրախ արիր ամուսինդ։

Փ. Ե՞ս իմ հօրըս կեանքը կարճեմ։ Ոչ, ո՛հ, ոչ։
Ուզում եմ դուստր ու կին լինել. տայ երկինք
Ինձ զօրութիւն. ինձ հետ և դուք խընդրեցէք։

Գ. Ցո՛ւր որդեկիս խաղաղութիւն։

Լ. ... Ամուսնիս։

ՏԵՍ. Գ.

ՍՊԱՍԱՒՈՐ ԵՒ ԱՌԱՋԻՆԳՌՆ.

Սպ. Մուտք է խընդրում, Տէր, մի ասպետ։
Փր.(¹) Պէտք ունիս
Հայր, հանդըստի. արի երթանք սենեակըդ(²)։

—

ՏԵՍ. Դ.

ԼԱՆՁԻՕԹԹՕ ԵՒ ՍՊԱՍ.

Լ. Իւր անունը։
Սպ. Իւր անունը չի ասում
Բայց գուշակել կարելի է։ Ներս մըտաւ
Սըրահները, ու սիրտը խիստ չարժեցաւ.
Ուրախութեամբ նայում էր նա պատերէն
Կախուած հին հին քո պապական զէնքերուն.
Ճանաչեց էլ հօրըդ նիզակն ու վահան։
Լ. Ա՛հ Փաօլո. ա՛ իմ եղբայր։
Սպ. Ահա նա։

—

ՏԵՍ. Ե.

ՓԱՕԼՕ ՝ ԼԱՆՁԻՕԹԹՕ վարոմ էն ՝ երեսը գրեւոած մընում էն։

Լ. Ա՛հ, դու ինքն ես, իմ եղբայր։
Փ. Դու, եղբայրըս,
Լանչիոթթո։ — Ո՛հ. ինչ անուշ արտասուք.

(¹) Գուիդոյին
(²) Գնում է Գուիդոյի հետ։

Լ. Բարեկամըս, միակ բարեկամ իմ մատղաշ
Տարիներուս. որքան երկար մընացի
Քեզնէ բաժան։
Փ. Վերջին անգամ մենք այստեղ,
Ու մի ուրիշ անձ էլ մեզ հետ գրկուեցանք.
Լալիս էր նա.... Նորան կըրկին տեսնելը
Տըրուած չէր ինձ։
Լ. Ա՛խ, հայրիկ։
Փ. Դու փակեցիր
Նորա մեռոտ աչերը. նա, մահուան մօտ,
Ոչինչ չասաց իւր փաօլի համար՝ քեզ։
Լ. Հեռի որդուն նա կանչելով մեռնում էր։
Փ. Եւ օրհնեց ինձ։ Մեզ երկընքէն նայում նա,
Ուրախանում է տեսնելով իրար հետ.
Եւ իրար հետ այս օրէս միշտ կը լինինք։
Փառքի ամէն սին ըստուերէ կուշտ եմ արդ։
Բիւզանդիոյ գահի համար թափեցի
Ես արիւնը, քաղաքներու յաղթելով
Որոնց դէմ մի ատելութիւն չունէի,
Մեծի անուն ժառանգեցի, 'ւ ողորմած
Ինքնակալի կողմէն պատուով ըզգուեցայ.
Ողջ աշխարհի գովեստներէն ձանձրացայ։
Այն ձեմ համար թուրըս արեամբ թաթխեցի.
Օտարներու։ Միթէ չունիմ հայրենիք
Որին լինի սուրբ իւր որդոց արիւնը։
Քեզ համար, քեզ, Իտալիա, որ ունիս
Կըտրիճ կըտրիճ քաղաքացիք՝ կը կռուիմ,
Թէ քեզ անէ նախանձութիւնն անարգանք։

Արեգակի ջերն ստացող աշխարհաց
Մէջը դու չես չընորհաշուքն ամենէն.
Մայր չես ամէն գեղարուեստի, Իտալիա.
Եւ քո փոչին՝ դիւցազներու փոչի չէ։
Իմ պապերուս քաջութիւն, դահ, դու սըւիր,
Եւ ինչ անդին որ ունիմ բան՝ պահում ես։

Լ. Տեսնել, լսել, ու չսիրել քեզ... չէ հընար։
Փառք երկընքին. նա քեզ առել կարող չէ։

Փ. Ո՞վ։

Լ. Զը գիտես. երջանկութեանը լըրման
Միւս դողտրիկ գըբաւականն այստեղ չէ։

Փ. Զըլինի թէ սիրահար ես։

Լ. Սիրահար.
Ո՛հ, ամենաչքնաղ կինն եմ սիրում ես...
Եւ ամենաղըժբաղդ կինը։

Փ. Ես ես եմ
Սիրահարուած. յայտնենք վըշտերս իրարու։

Լ. Դեռ չըմեռած՝ հայրս ինձ հարկեց պըսակուիլ,
Որմէ հաստատ խաղաղութիւն մեզ պիտ՝ զար.
Հըրամանըն կատարեցի։

Փ. Սիրուհիդ
Կին է ուրեմն քեզ, և դու ուրախ չես։
Այդ ո՞վ է նա. քեզ չի՞ սիրում։

Լ. Անիրաւ
Կ՚ասէի, թէ ասէի չի սիրում։
Ո՛ւր էր թէ քեզ այնպէս սիրէր. բայց Նորա
Դու մի եղբօրն ըսպանեցիր կըռուի մէջ,
Ուստի սոսկում քեզնէ, տեսնել չի ուզում։

Փ. Ասա, ո՞վ է. ո՞վ է նա։

Լ. Դու տեսել ես
Նորան՝ երբոր Գըվիդօի պալատում...

Փ.[1]) Նա. . .

Լ. Գուիդօի աղջիկն է։

Փ. Քեզ սիրում է։
Նա է ուրեմն ամուսինը։ — Արդար է,
Նրան մի եղբայր... ես ըսպանի...

Լ. Եւ այդ միշտ
Սուգ է սըրտին։ Հայրենիք յետ դառնալուդ
Լուրը լըսած օրէն ի վեր յուսահատ՝
Խորշում է նա այս կըտուրէն։

Փ.[2]) Եւ տեսնել.
Տեսնել անդամ մերժում է նա։ — Երջանիկ
Կարծում էի լինել եղբօրս հետ մէկտեղ...
Կ՚երթամ դարձեալ... ու յաւիտեանըս հեռու
Իմ հայրենի տանէն կեանքըս կանցկացնեմ։

Լ. Բարեբաստիկ երկսիս համար միապէս
Լինելու է յարկն հայրենի։ Չէս, բընաւ
Չես հեռանալ դու ինձանից։

Փ. Կաց ապրիր
Խաղաղութեամբ. մարդս ամէն բան ամուսնէն
Վայր է դասում։ Սիրէ Նորան... Ա՛ռ այս թուրն,
Ա՛խ, քուկդ ինձ տուր. միտ բեր միշտ քո փաւլիդ[3])

---

[1]) Ջսպելով իւր սոսկալի յուզմունքը։

[2]) Միշտ ինքն իրեն զսպելով։

[3]) Քաղցր բռնութեամբ կատարում է փոխանակութիւնը։

Լ. Եղբայր...

Փ. Թէ օր մ' իրար տեսնենք մենք կըրկին,
— Թէ ապրեցայ... — մեր սրտերու բաբախումն
Աւելի սառըն կը լինի... ժամանակն,
Որ ամէն բան հանգցընում է, կըլինի...
Փըրանկիսկի սըրտի քէնը հանգուցած,
Եւ ինձ եղբայր կը կանչէ։

Լ. Լաց ես լինում

Փ. Չէ՞ որ ես եըս սիրեցի։ Իմ աչքում
Նա մի հատիկ աղջիկ էր ողջ աշխարհում...
Ա՛խ, նա ատում չէր ինձ. ոչ, չէր ատում ինձ։

Լ. Ի՞նչ ուրեմն. ինչ եղաւ նա։

Փ. Իմ ձեռքէս
Նորան երկինքն յափըշտակեց։

Լ. Եղբօրըդ
Սէրը լինի քեզ ըսփոփանք։ Տեսքովըդ,
Կերպերովըդ Փրանկիսկէի սիրտըն իսկ
Դու կը կակղես։ Արի երթանք...

Փ. Ո՞ւր երթանք...
Նորա առջև՞... քաւ թէ բընաւ երևիմ։

ՀԱՆԴԷՍ ԵՐԿՐՈՐԴ

—

ՏԵՍԻԼ Ա.

ԳՈՒԻԴՈ, ՓՐԱՆՆԻՍԿԷ։

Փր. Այստեղ... յաւել աղատ է օդն։

Գ. Ո՞ւր այդպէս
Տարակուսած այս և այն դին ես դառնում։

Փր. Փաօլի ձայնը... ականջիդ չը դիպաւ...

Գ. Մի դու երկիւղ կըրեր նորան տեսնելու։
Թէ չը ցանկաս, նա քո առջև չի ելնել։

Փր. Ասա՛ մէկը... թէ ես իրեն ատում եմ.
Գուցէ ցաւ է եղել սըրտին։

Գ. Շատ ցաւ է։
Երթալ ուզում էր. Լանչիոթ չը թողեց։

Փր. Նա ուզում էր երթալ։

Գ. Հիմա հանդարտ ես։
Լանչիոթթո յոյս ունի թէ դու այսօր
Կը կարենաս եղբօր երեսը տեսնել։

Փր. Հայր իմ, հայրիկ. ձեռքդ մէկ դիր, տես դու թէ
Նորա գալը... ա՛խ, իմացիր, ինչ սաստիկ
Բաբախմունք է յարուցանում սըրտումըս։ —
Հըռիմինի ինձ անապատ էր թըւում.
Մունջ ու սըգի տուն էր թըւում այս տունը.
Մինչդեռ հիմա... — Աղաչում եմ քեզ, հայրիկ,
Մի թողներ ինձ. այլ մի թողներ։ Քեզ հետ միայն
Կըկարենամ բերկրիլ՝ ու թէ արտասուել.
Դու թըշնամի չես ինձ... ու կը զըթայիր,
Թէ...

Գ. Ի՞նչ։

Փր. Թէ որ գիտենայիր... — Ո՛հ. ուրքան
Դառն է ապրիլ մէն միայնակ։ Դու զըթած
Մըխիթարիչ ես ինձ... բացի քեզանից՝
Չը կայ մէկը, հայրիկ, որմէ չը դողամ,
Որի առաջ սըրտիս բոլոր շարժմունքը

Բըռնաղատել հարկաղըրուած չը լինիմ...
Սիրտս ծածուկ չեմ պահում ես. դիւրութեամբ
Ուրախանում, լաց է լինում դիւրութեամբ.
Բայց խինդ թէ լաց ցոյց տալ մէկին կարող չեմ.
Ցանկարծ կարող եմ մատնըվիլ. և վայ՝ թէ
Մի խօսք բերնիցս թըռցընեմ խօսելիս...
Դու... աւելի զըթածօրէն կը նայիս
Քու աղջկադ աղէտներուն... Եւ եթէ
Վըստանգն ընկնի... զըթոտ ձեռով կը հանես։

Գ. Այո՛, սիրտըդ դու չես ծածկում... Քու դաղտնի
Խորհուրդներըդ՝ այնուհետև դաղտնի չեն,
Երբ դորովոտ հօրըդ հետ ես դու լինում։

Փր. Բոլորն... յայտնել կուզէի քեզ... Ա՛խ, այդ ինչ,
Ի՞նչ եմ ասում։ Ո՞ւր ծածկըվիմ ամօթէս։
Բացուիր, զէտին. մէջըդ անցնիմ։

Գ. Որդեակ իմ,
Խօսիր։ Երկինք տալիս են քեզ սիրտ ու միտք։
Վըստահ եղիր։ Ցանկանք է քեզ թաղցընելն...

Փր. Թաղցընելը պարտք է ինձ, պարտք լըռելը.
Միայն յանցանք է ըսփոփանք խընդրելը.
Ցանցանք՝ պատմելն այսքան չար մեղք այն հօրն
Ամենալաւ փեսի տըւեց իւր աղջիկն... (որ
Եւ բաղդաւոր չարաւ նորան։

Գ. Վա՛յ զըլխուս.
Քո դահիճըդ ուրեմն ես եմ։

Փր. Ո՛հ, դու չես,
Բարի հայրիկ... — Թուլանում է ունեցած
Եւ այն տըկար արութիւնս էլ։ — Սոսկալի,

Բայց հարկաւոր ճիգըն, հաս ինձ փըրկութիւն.
Գահպանէ ինձ։ Երկար կըռուի յաղթեցի
Մինչև այս օրս. իսկ այս յետին օրերը
Սարսափ թափում են իմ վերայ... Ձեռք տուր,
(հայր.
Որ սըրբութեամբ կընքեմ ես այդ օրերը։
— Լանչիոթի կասկածն ուղիղ է, այո՛.
Բայց չարադործ չեմ, մանաւանդ՝ նորան կին
Մընացել եմ հաւատարիմ, և լինել
Հաւատարիմ կին նորան՝ իմ իղձըս է...—
Հայր...տեսնում եմ.. քրտինք վազում է ճակտէդ..
Աչքըդ ինձնէ դարձընում ես... սոսկում ես...

Գ. Ոչինչ, որդեակ... յառաջ տար խօսքդ...

Փր. Ա՛հ, ուշքըդ
Անցնում է, հայր։

Գ. Բան չկայ, որդի։ — Մի թեթև
Շըփոթութիւն այստեղ... այստեղ զըլխումըս...
Ա՛հ, քաղցըր է ծերունի հօր մ՚ իր անդօր
Անդամներուն նեցուկ տեսնել իւր որդոց։

Փր. Ո՛հ, արդար է. ճիշդ է տըւած կըշտամբանքդ.
Երախտամոռ, երախտամոռ որդի եմ։
Պատուհաս տուր...

Գ. Ո՞ր ամպարիշտն անսուրբ բոց
Սիրտըդ ճըգեց։

Փր. Նա ամպարիշտ չէ, չիտէ,
Չիտէ իմ սէրս։ Ինքն ինձ սիրում չէ։

Գ. Ո՞ւր է։
Հըռաւենոնա երթալ դուցէ ուղեցիր

Որ վերբստին նորան այնտեղ տեսնես դու։
Փր. Որ նորանից փախչիմ, հայր իմ։
Գ. Ո՞ւր է նա.
Պատասխան տուր, որտեղ է նա։
Փր. Խոստացար
Խզճալ վերաս, մի՛ սրդողիր։ Այստեղ է,
Հռիմինիում է նա...
Գ. Ո՞վ է եկողը։

—

ՏԵՍԻԼ Բ.

ԼԱՆԶԻՕԹՕ ԵՒ ԱՌԱՋԻՆՔՆ։

Լ. Վրդովուած էք...(¹) Հանդարտ էիր փոքր յառաջ։
Գ. Վաղիւ կ'երթանք, Փրանկիսկէ։
Լ. Ինչ ասիր։
Գ. Փրանկիսկի կամքն է այդ։
Փր. Հայր։
Գ. Ի՞նչ. կ'ինչեմս...(²)

—

ՏԵՍԻԼ Գ.

ԼԱՆԶԻՕԹՕ, ՓՐԱՆԿԻՍԿԷ։

Փր. Ո՛հ, ամենից անգութ ինձ իմ հայրըս է։
Լ. Չէիր ուզում թողնել ինձ և հեռանալ.
Կարծում էի թէ ցաւըս քեզ ցաւ տրւեց։

(¹) Փրանկիսկէին։
(²) Գնումէ՝ սպառնալից նայելով Նորան։

Բայց երթալը թէ Փաւլօէն փախչիլ է,
Հարկ չէ երթալ. ինքն է գընում։
Փր. Ի՞նքը գնում։
Լ. Կեանքը Նորան մահաբեր է երևում,
Թէ ատուած՝ իւր թերավիներում պիտ՝ ապրի։
Փր. Այդքան ցաւած է նա։
Լ. Ի զուր կամեցայ
Միտքը փոխել. երդուեց երթալ։
Փր. Նա քեզի
Շատ է սիրում ...
Լ. Անուշ ու աղնիւ է սիրտը։
Թոյլ սէր (նրման ինձ՝ այդ մասով) չի ըզգում...
Եւ ապրում է, ինձ պէս, սիրոյ զոհ դարձած։
Փր. Զոհ է դարձած սիրոյ։
Լ. Այո։ Բո սիրտն իսկ
Զէր դիմանալ՝ իւր խօսիլը թէ լսէիր...
Փր. Ինչու ապա մեր այս ափերն է եկել։
Կարծում է թէ ուրիշ եղբայր կա՞ ունիմ,
Որ ըսպանէ։ Նա ինձ միայն ՀՐՇՏԱՊԷՐ,
Իրաւ, եկաւ։
Լ. Անիրաւում կա տիկին։
Աղաչում է որ քանի չէ զընացել՝
Մի բոպէ սոսկ լըսես իրեն, մի բոպէ
Տեսնես իրեն։ — Ո՛հ, միտք լեր որ տագրըդ է.
Որ կըրկին նոր հեռու ճամբա է գընում.
Որ գուցէ թէ Նորան դարձեալ չը տեսնենք։
Կըրծնը գէթ խօսի սըրտումդ։ Թըշնամի
Ինձ թէ մէկը, միտքը գըրած անցանկ

Ովկիանոսը, դար նախ ինձ մօտ ու աջը
Երկընցընէր... ես այդ աջը գորովով
Կը սեղմէի, այնքան քաղցր է ներելը։

Փր. Ո՛հ. հերիք է... Ա՛խ. այս որքան ամօթանք։

Լ. Ո՞վ գիտէ թէ, ինքն իրենըս կ՚ասէի,
Այն ընդարձակ ովկիանոսը՝ երկուսիս,
Այս մահացուի ու իմ մէջը, չի լինիլ
Անանց պարիսպ՝ քանի որ կանք ու կ՚ապրինք։
Մահից յետոյ միայն, երկընքում... Եւ այնտեղ
Մենք ամէնքըս իրար անշուշտ կը տեսնենք...
Հնար չէ այնտեղ բաժան լինիլ։ Ո՛վ տիկին,
Եղբօրս ատել՝ քեզ այնտեղ չէ կարելի։

Փր. Ա՛խ, իմացիր, ով մարդ... ո՛հ դու ներէ ինձ...

Լ. Արի, եղբայր։

Փր. Ո՛վ տէր Աստուած։(¹)

—

ՏԵՍԻԼ Դ.

ՓԱՕԼՕ ԵՒ ԱՌԱՋԻՆՈՒՆ։

Փ. — Փրանկիսկէ...
Ի՛սկ ինքն... ահա։

Լ. Ցառաջ արի, Փաօլօ։

Փ. Բայց ինչ ասեմ։ — Դու նա ինքն ես։ — Բայց (թէ նա
Մերժում է ինձ տեսնել, լսել կը հաճի։
Լաւ է դարձեալ երթամ. այնքան ատելի

(¹) Ընկնում է Լանչիոթթօի գիրկը։

Գուցէ չլինիմ։ — Սակայն իրեն, դու՝ եղբայր,
Ասա որ ես ներում եմ իւր ոխութեանն՝
Որին արժան չեմ։ Ես իրեն սիրելի
Հարազատին ըսպանեցի, բայց առանց
Իմ ուզելուս։ Նա, ջարդուած տեսնելով
Իւր զընդերը, մոլեգնոտած վրայ վազեց
Ու կամովին ընկաւ թերիս բերանը.
Թէ չէ, կեանքիս զընով նորան կփրկէի։

Փր[¹]) Գնանց, Լանչիոթ, գնանց Փաօլօն։ Լացի ձայն
Եմ առնում ես. ո՞վ է։

Փ. Ես եմ, Փրանկիսկէ,
Ե՛ս, լացողը. մահկանացու մարդկանցից
Մեծ ապաբաղդն ես եմ, թշուառս։ Ես եմ, որ
Զըրկըւում եմ մինչև անդամ հայրենի
Թերափներուս խաղաղութեան վայելքէն։
Հերիք չէր ինձ սիրտըս վէրքով վիրաւոր.
Հերիք չէր որ կորաւ... պաչուած սիրուհիս,
Այժմ եղբայր ես՝ և հայրենիք եմ կորցնում։

Փր. Պատճառ լինիլ չեմ՝ որ եղբայր եղբօրէ
Փախչիլ հարկուի։ Ե՛ս կերթամ, դու մընացիր.
Լանչիոթին հարկաւոր է բարեկամ,

Փ. Ո՛հ, սիրում ես. իրաւացի ես սիրում։
Ես ևւրս եմ նորան սիրում... Եւ հեռու
Երկիրներում կռիւ անելիս... նաև երբ
Ցաղթուածներուն՝ հարսներուն և կոյսերուն

[¹]) Միշտ ամուսնու գրկում, առանց երեսը՝ վեր բռնել համարձակելու։

Փբրկում էի յաղթող ամբոխիս ձեռքէն,
Եւ չորս կողմէն կանչում էին բոլորն ինձ
Զօրեղ մարտիկ, բայց ողորմած սիրա մարտիկ...
Միտքս էր ընկնում եղբօրս անուշ յիշատակն,
Եւ երևում էր ինձ թէ նա պարծանքով
Կը տեսնէր ինձ մի օր կբրկին... և ամբողջ
Իտալիան ու իւր սիրուն տիկնայքը
Սիրով կուտային անպարսաւ ասպետի
Անունը։ — Ա՛խ. չարայաջող էին ինձ
Այն յաղթութիւնք. չարայաջող՝ քաջութիւնս։

Փր. Ուրեմն հեռու տեղերում դու կրռուելիս
Խրդճում էիր յաղթուածներուն։ Հարսներուն
Ու կոյսերուն փբրկում էիր։ Եւ թերևս
Այնտեղ նոյնպէս տեսար սրբուհի իշխողին։
— Ի՞նչ եմ խօսում։ Խելացընորս։ — Դնա. այո,
Ատում եմ քեզ։

Փ.[1]) Լանչիոթթո, կաց բարով։
— Փբրանկիսկէ...

Փր. (Լսելով որ փնում է, բռնադատուած ոչը նչփում է նորը վերայ)։

Փ. (Ի՛սկապէս խօսել, բայց՝ ինչպէս սուտին նեղած լինելով՝ վախենում է որ չը յայտնուի իւր փաղանիքը, և շտապով դուրս է թռչում)։

Լ. Ի՛նձ նայէ, կաց, Փաօլօ։

—

[1]) Հաստատապէս։

ՏԵՍԻԼ Ե.

ԼԱՆՉԻՈԹԹՈ. ՓՐԱՆՆԻՍԿԷ։

Փր. Փաօլօ... Վա՛յ ինձ խրդճալուս։

Լ. Ով անդութ,
Խեղճդ տալիս է թէ միայն կեղծում ես։
Այլ ուր լացով ողողում ես երեսդ,
Թէ բոլորիս թշուառացնելն է միտքդ։
Խօսիր, պատճառն եմ ես խընդրում որ յայտնես
Տարօրինակ խորհուրդներդ։ վերջապէս
Հոգուս հասաւ. այլ չեմ կարող համբերել։

Փր. Նոյնպէս և իմ հոգուս հասաւ որ այսքան
Քո անարդար կըշտամբանքներդ եմ լսում.
Եւ այդ հոգին միայն այն ժամ կխաղաղի,
Երբ կուզայ օրն որ այլ աչխարհս չեմ տեսնիլ...

ՀԱՆԴԷՍ Գ.

—

ՏԵՍԻԼ Ա.

ՓԱՕԼՕ։

Տեսնել նորան... այո. յետոյն այս անգամ
Սէրը խեղդում է պարտքի ձայնը սրբուհու։
Թողնել երթալ, չտեսնել նորան այլ կրս՝
Սուրը պարտք կլինէր ինձ համար, բայց՝ չեմ կա-
(բող։
— Ո՛հ. ինչ աչքով նայեց նա ինձ։ Ցաւը նրան
Աւելի է դեղեցկացնում. աւելի,

Այո՛, նա ինձ երևեցաւ գեղեցիկ,
Շատ աւելի գերբընական։ Իսկ նորան
Ես կորուսի։ Հանից ձեռքէս Լանչիոթն.
Ա՛խ, ինչպիսի կատաղութիւն... Եղբօրը
Այլ չեմ սիրում։ Բաղդաւոր է... և երկար
Թող՝ թող լինի նա բաղդաւոր... Բայց միթէ
Որպէս զի ինքն երջանկանար, պէտք էր որ
Այդպէս մեծ վէրք բանար եղբօր սրտի մէջ։

—

ՏԵՍԻԼ Բ.

ՓՐԱՆՆԻՍԿԷ յառաջ է գալիս առանց ՓԱՕԼՕԻՆ դիմելու։

Փր. Ո՞ւր է հայրը։ Դէթ նորանից լսէի
Թէ դեռ այստեղ է... իմ... տագրը։ — Այս (պատերն
Ինձ կը լինին միշտ ցանկալի... Եւ հոգիս,
Ա՛խ, և հոգիս կուտամ այն սուրբ հողի վրայ
Որ նա թրջեց արտասունքով... Ամպարիշտ,
Մերժէ քեզնէ չար մտքերդդ. կին ես դու...

Փ. Մենակ խօսում ու հառաչում է։

Փր. Ա՛խ. պէտք է
Թողնեմ այս տեղն՝ որ շատ լիքն է նորանով։
Պէտք է քաշուիմ ընտանեկան սրբարանն...
Եւ զոր՝ գիշեր ընկած Աստծու առաջին՝
Խընդրեմ մեղացը թողութիւն. որ չը ձգէ
Բոլորովին ինձ երեսէ, մէն միակ
Ցաւած սրտերու ապաւէն՝ Աստուածը։(1)

(1) Երթալու է լինում։

Փ(1) Փրանկիսկէ...

Փր. Ո՛վ կերպարան։ — Տէր... ինչ է։

Փ. Մի անգամ էլ հետը խօսիլ։

Փր. Հետս խօսի։ —
Վա՛յ. մենակ եմ... Մենակ թողիր ինձ, հայր իմ։
Հայրիկ, ուր ես. հասիր աղջկանդ օգնելու։ —
Փախչիլ թերևս կարենամ։

Փ. Ո՞ւր։

Փր. Տէր... լսէ,
Ցարդէ կամքս. մի լինիր ինձ հետամուտ։
Դէպ ընտանի մատուռն ուղղում եմ քայլս.
Թրշուառները երկնից զթոյն կարօտ են։

Փ. Քեզ հետ կուգամ հայրենական սուրբ սեղանն։
Ո՞վ է ինձէն թրշուառ։ Այնտեղ խառն իրար
Թող վեր ելնեն հառաչանքներս։ Ո՛վ տիկին.
Դու իմ մահս կը պաղատիս, քու ատած
Մարդու մահը... ես կ՚աղօթեմ որ երկինք
Լսէ մաղթանքդ ու ատելութեանդդ ներէ,
Ուրախութեամբ լի անէ քեզ, և երկար
Դէմքիդ վերայ պահէ գեղ ու մանկութիւն,
Եւ քեզ բոլոր ցանկացածդդ տայ... բոլոր...
Նոյն իսկ... սէրը քու ամուսնիդ... բաղդաւոր
Եւ որդիներ քեզ՝ նորանից։

Փր. Փաօլօ,
Խընայէ ինձ։ — Ի՞նչ եմ ասում։ — Ո՛հ, մի լար։
Մահդ չեմ խընդրում։

(1) Ցառաջ գալով։

Փ. Բայց և այնպէս ասում ես ...
Փր. Եւ ինչ փոյթ է թէ ես պէտք է քեզ ասեմ ...
Ես քու կեանքդդ չեմ պըղտորում. և վաղիւ
Կ'երթամ, այստեղ այլ չեմ լինիլ։ Դու զբաղած
Ընկերութիւն կ'անես երէց եղբօրդդ։
Ինձ կորցնելուն վերայ նորան մխիթարէ.
Կուլայ անշուշտ ... Ա՛խ, Հռիմինիում, նա միայնակ
Պիտ' լայ, իրեն երբ յայտնուի... — Լըսէ ինձ.
Առ այժմ նորան չ'ասես դու այս. բայց գիտցիր
Որ ես այլ ես Հռիմինի չեմ դառնալու.
Սըրտիս ցաւը կը սպանէ ինձ։ Ամուսնիս
Երբ այդ յայտնուի, մխիթարէ դու նորան.
Եւ դու... թափէ կաթիլ մ' արտասունք իւր համար։
Փ. Փըրանկիսկէ. ինձ քու ասելդ ինչ փոյթ է.
Հարցնում ես էլ։ Եւ այդ ասելդ՝ իմ կեանքիս
Չի պըղտորում։ Եւ այդ քո տխուր խօսքերդ են...
Հըրեշտակի նըման սիրուն, քեզ Աստուած
Իւր ըստվառ սիրոյ պահին ըստեղծեց...
Դու սիրելի ամէն մէկին... բաղդաւոր
Եւ ամուսին... և մահի վրայ ես խօսում.
Նա ապասում է ինձ որ ի սէր սին փառքի
Անջատուեցայ հայրենիքիցըս հեռու,
Եւ կորուսի... — Ա՛խ, կորուսի ծընողըս։
Իւր հետ կըրկին գըրկախառնուիլ էր յոյսըս։
Նա ինձ դըժբաղդ անողը չէր. եթէ որ
Սիրտըս իրեն բաց բանայի... նա կ'ուզէր
Ինձ այն աղջիկն... որին անդարձ կորուսի։
Փր. Ինչ ես ասում։ Սիրուհուդ վրայ է խօսքըդ...

Ու առանց նորան այդքան թըշուառ ես ապրում.
Այդքան հըզօր է քու ծոցումդդ սէրը։
Քաջ կըտրըճի ծոցում կըրակ՝ միայն սէրը
Չէ պէտք լինի։ Անունն ու թուրը նորան
Սիրելի են. ընտիր իզձեր են դոքա։
Գընա նոցա ետևէն դու. թող չլինի
Որ սէրը քեզ նուաստացընէ։
Փ. Ի՞նչ խօսքեր։
Չլինի դուքդ վրաս չարժեցաւ։ Ինձ փոքր ինչ
Կըզաղրէիր դու ատելէն, թէ թըրով
Է՛լ մեծ անուն հանէի ես։ Հերիք է
Քո մի հրամանդ։ Նըշնէ տեղն ու տարիներն
Ես էն քաջուած կողմերն անդամ կը գընամ.
Եւ գործն որքան վրանդալի ու ծանրը
Գըտնեմ, այնքան ինձ դուր կուգայ. ըստ որում
Փըրանկիսկի հրամանովն է։ Բազկիս ուժ
Շատ են տալիս կրակոտ եռանդն ու պատիւ։
Բայց պաչտելի անունդ էլ շատ կ'ուժեղցնէ։
Փառքս արատուիլ չի ըրռնաւոր խորհրդով։
Քո մատներով հիւսած դափնի պսակէն դուրս
Ուրիշ պըսակ ես չեմ ուզում. բաւ է ինձ
Մէկ դովութիւնդ, մէկ խօսք, ժըպիտ, մէկ նայ-
ուածքդ ...
Փր. Անմահ Աստուած. ի՞նչ բան է այս։
Փ. Սիրում եմ
Փըրանկիսկէ, քեզ եմ սիրում, ու սէրըս
Յուսահատ է։
Փր. Ի՞նչ եմ լըսում։ Մի գուցէ

Ցընորուում եմ։ Ինչ ասիր։

Փ. Քեզ սիրում եմ։

Փր. Ի՞նչ ես խօսում։ Ո՛հ, լռէ։ Լսել կըրնան...
Սիրում ես ինձ։ Այդքան յանկարծ է հուրբդ։
Եղբըրկինդ եմ, մինթէ չիտես։ Այդպէս չուտ
Ի՞նչպէս մոռնում ես կորուսած սիրուհիդ։
Ա՛հ... թող, թող ձեռքս։ Ցանցանք են քո համ-
(բոյրներդ։

Փ. Ցանկարծալառ չէ սըրտիս հուրն։ Կորուսի
Մի տիրուհի, և այն դու ես. քո մասին
Էր իմ խօսքըս, արտասուքըս քեզ համար։
Սիրում էի քեզ. սիրում եմ անդադար,
Եւ պիտ սիրեմ մինչև յետին կէտ կեանքիս.
Եւ ամբարիշտ սիրուս համար մըշտական
Թէև կըրեմ կըրեմ պատիժ հոգի տակ,
Միշտ պիտ սիրեմ քեզ առաւել ու առաւել.

Փր. Իրա՞ւ դու ինձ սիրում էիր։

Փ. Այն օրն որ
Հօրըս կողմէն դեսպան հասայ Հռաւեննա,
Տեսայ անցար դու մի դաւթով՝ միասին
Սնաւորուած տըխուր կանանց խըմբովը.
Ու գընացիր կանգնար մի նոր շիրմի մօտ.
Ծունըր իջար մեծարանքով, և ձեռքերդ
Միացուցած բարձրացուցիր դէպ երկինք
Լուռ և անձայն, բայց սըրտագին լալանքով։
Ո՞վ է աղջիկն. հարցի մէկին։ —Գուիդօի
Աղջիկն է, ինձ պատասխանեց։ —Իսկ շիրիմն։—
Իւր մօր շիրիմն։ — Ո՛հ, սիրտս ուրքան ճըմլեցաւ

Այն սըգաւոր աղջկայ վիշտը տեսնելով։
Ո՛հ ինչ չըփոթ տըրոփ սըրտի... Երեսիդ
Քող ունէիր, ով Փրանկիսկէ. այն օրը
Ես չը տեսայ աչքերըդ, բայց՝ այն օրէն
Քեզ սիրեցի։

Փր. Դու... էհ, բաւ է... ինձ սիրում
Էիր։

Փ. Եւ ես՝ այս բոցն երկար ծածկեցի,
Միայն մի օր կարծեցի թէ կարդացիր։
Սըրտիս խորը։ Դու դէպ ծածուկ պարտէզը
Քո կուսական օթեանիցըդ ելած
Շիտակած էիր քայլերըդ. ես լըճի մօտ
Ծաղիկներու մէջ փըռուած՝ ախ քաշելով
Նայում էի դէպ օթեանդ. և գալդ երբ
Տեսայ՝ խսկոյն սըրտատրրոփ վեր թըռայ։—
Ինձ չէր տեսնում աչքըդ գըրքի մէջ թաղուած.
Մի կաթ արտասուք վազեց աչքէդ գըրքի վրայ...
Խանդաղատուած մօտեցայ քեզ։ Իմ խօսքերս
Երկմիտ էին, երկմիտ էին և քուկինդդ։
Գիրքն ինձ տըւիր ու կարդացինք միասին
Թէ սէրն ինչպէս Լանչիլոթթին հրապուրեց։
Միայն էինք և առանց մի կասկածի...
Աչքերս իրար հանդիպեցան... իմ դէմքըս
Գունատեցաւ... դողում էիր դու... և չուտ
Անյայտացար։

Փր. Ո՛հ, օր։ Գիրքը քեզ մընաց։

Փ. Հանգչում է նա սըրտիս վերայ։ Երջանիկ
Անուամ էր ինձ օտարութեանըս մէջը։

Ահաւասիկ. տես թղթերն որ կարդացինք։
Ահա այստեղ, տես, արտասուքն ընկաւ
Այն օրն աչքերդ։

Փր. Պաղատում եմ քեզ, գընա.
Այլ յիշատակ՝ քան ըսպանուած իմ եղբօրն
Պէտք չէ պահեմ ես մըտքումըս։

Փ. Դեռ թափած
Չէի ես այդ արիւնը։ Ո՛վ դըժընդակ
Մեր հայրերու պատերազմներն։ Այն թափուած
Արիւնն ինձնէ համարձակութիւնս առաւ.
Զուզեցի ձեռքդ, ու քաշուեցայ Ասիա
Կըռիւ տալու։ Ցոյս ունէի չուտ յետ դալ
Ու քեզ արդէն հաշտուած տեսնել ու առնել։
Քեզ առնելու յոյսն, ամ, սըրտումս ունէի,
Չեմ ուրանում։

Փր. Ո՛հ, աղաչում եմ, գընա.
Խնայէ ցաւիս, առաքինութիւնս յարգէ։—
Ո՞վ ինձ կուտայ զօրութիւն որ դիմանամ։

Փ. Ա՛հ, սեղմեցիր ձեռքս. ով բերկրանք. ասա էր
Սեղմեցիր ձեռքս։

Փր. Փաօլո։

Փ. Ինձ չես ատում։
Դու ինձ չես ատում։

Փր. Պէտք է որ քեզ ես ատեմ։

Փ. Եւ կարող ես։

Փր. Չեմ կարող։

Փ. Ո՛հ անուշ խօսք.
Կըրկին ասա. ով կին, ատում չես ինձ դու։

Փր. Հերիք ասածս։ Բաւ չէ՞ անգութ։ Թող ինձ, գնա,

Փ. Ո՛հ, չեմ թողնիլ մինչև բոլորը չ՚ասես։

Փր. Եւ չ՚ասի թէ... սիրում եմ քեզ։ Դուրս եկաւ,
Ա՛խ, իմ բերնէս խօսքն ամպարիշտ... սիրում եմ
Քեզ, ու վառուում սիրոյս կրակով քեզ համար..
Բայց մեռանել եմ փափագում անմեղիկ.
Գըթա՛ վերաս։

Փ. Դու՛ ինձ սիրում ես, ո՛հ, դու...
Ցնս սոսկալի վիշտս։ Ցոյսս կըտրած եմ.
Բայց խընդութիւնն՝ որով լեցուում է սիրտս
Այս յուսահատ կըրքիս պատուն, այնպէս է
Եւ այնքան մեծ խընդութիւն՝ որ անպատում։
Իրաւ դու ինձ սիրում էիր... Եւ կորցրի։

Փր. Ինքըդ դու ինձ, ով փաօլո, թողեցիր։
Չէի կարող սիրուած կարծել ինձ քեզնից։—
Գընա, թող այս վերջին անգամը լինի...

Փ. Բընաւ անկար է թէ քեզնէ հեռանամ,
Գէթ ամէն օր տեսնել իրար...

Փր Եւ մատնուիլ։
Ու վատ կասկած ձըգել ամուսնուս միտքը.
Եւ կնդա՛ չըփել իմ անուանըս։ Փաօլո,
Թէ ինձ սիրում ես, հեռացիր ինձանից։

Փ. Ո՛հ անդարման դառը վիճակ։ Ե՞ս արատ
Բերեմ անուանդ։ Ո՛չ։—Հարսն ես դու ուրիշի։
Ե՛ս պիտ՚ մեռնիմ։ Հանէ սըրտէդ յիշատակս.
Ապրիր խաղաղ։ Ներող եղիր ինձ՝ որ ես
Խաղաղութիւնդ վըրդովեցի։ Ո՛հ, մի՛ լար։
Մի՛ սիրեր ինձ։—Վա՛յ, վա՛յ. ինչ եմ ասում ես։

Սիրէ, այո՛. լաց չարաժամ բաղդիս վրայ...—
Լանչիոթթի ձայնն եմ լսում։ Ո՛վ երկինք,
Կարողութիւն տուր ինձ։ *) Արի, եղբայր իմ։

—

ՏԵՍԻԼ Գ.

ԼԱՆՉԻՈԹԹՈ, ԳՈՒԻԴՈ ԵՒ ԱՌԱՋԻՆԳՆ։

Փ. Տուր ինձ հիմա վերջին համբոյրդ։
Լ. Եւ ի զուր...
Փ. Կամքիս բընաւ դէմ մի կանգնիր։ Զարագուժ
Նըշաններ եմ բերել հետս։ վայ՝ թէ ես...
Լ. Ի՞նչ ես խօսում։ Ունքերդ իրար ես զարկել։
Փ. — Ա՛խ, մերը չէ. բաղդի մեղքն է։ — Մնաս (բարով,
Փըրանկիսկէ։
Փր.[1]) Փաօլո... կաց։
Լ. Այս ինչ ձայն։
Գ.[2]) Վայ ինձ. չունչը կըտրրուում է։
Փ.[3]) Փրանկիսկէ...
Փր. Նա գընում է... մեռնում եմ ես։)
Փ. — Փրանկիսկէ...

---

*) Դանչելով։
[1]) Դիր թէ ցնորուած, և աղէկտուր ձայնով։
[2]) Նեցուկ լինելով աղջկան։
[3]) Գնալու պատրաստութեամբ։
[4]) Գուիդոի գրկի մէջ ուշաթափ է լինում։

Ո՛վ երեոյթ... օգնութիւն տուէք։
Գ. Որդեակ...[1])

—

ՏԵՍԻԼ Դ.

ԼԱՆՉԻՈԹԹՈ ԵՒ ՓԱՕԼՈ։

Լ. Փաօլո... ինչ է լըսածը... Սոսկալի
Փայլակ վազում է աչքերուս առջևէն։
Փ. Անդութ. խընդա. իւր լոյսն անցաւ... Թող մեռ-
(նիմ.
Հեռու փախիր ինձանից։[2])

—

ՏԵՍԻԼ Ե.

ԼԱՆՉԻՈԹԹՈ։

Լ. Ձընշմարիտ է։
Սօրան սիրէ, նա։ Ուրեմն կեղծում էր...
Ոչ. դըժոխքէն այս կասկածը սրպըրդում
Է իմ միտքըս... բայց սակայն... Թող արդեւուի
Փաօլոյին արքունիքէն դուրս երթալն.
Բընի արգել։ Օ՛ն պատառուիր, անդութ քոյ։

---

[1]) Փրանկիսկին տանում են իւր սենեակը։
[2]) Գնում է։

ՀԱՆԴԷՍ Դ.

—

ՏԵՍԻԼ Ա.

ԼԱՆԶԻՈԹՈ. ՍՊԱՍԱՒՈՐ։

Լ. Ի՞նչ։ Գըվիդոն ըստասկեցնում է երթալն։
Տեսնել ուզում եմ Փրանկիսկին։ Նաև նա
Թող յանդիման գայ լինի ինձ... ՓաՀլՀն։
Սպ. Քո եղբայրը...
Լ. Իմ... եղբայրը։

—

ՏԵՍԻԼ Բ.

ԼԱՆԶԻՈԹՈ։

— Եղբայրը։
Եղբայր է ինձ. մեղքն աւելի սոսկալի։ —
Նրան ատում էր. ահ խաբեբայ։ Եւ ես էլ
Հաւատացի ատելութեանն։ Իւր լալուն
Պատճառ նորա հեռաւորութիւնը էր։
Գուցէ նորան Փըրանկիսկէն ծածկապէս
Հըրաւիրեց Հըռիմինի յետ գալու։ —
Դադարեցէք, մըտածմունքներս. չար խորհուրդ
Տալիս էք ինձ ձեռքըս թըրիս տանելու...
Ո՛ղջ դողում եմ։

—

ՏԵՍԻԼ Գ.

ԳՈՒԻԴՈ, ԼԱՆԶԻՈԹՈ։

Լ. Ինձէն փախչիչն է թերևս
Աղջկադ միտքը։ Եւ առանց իմ գիտութեան

Ցոյս ունի նա փախչիլ ինձէն։ Եւ դու իւր
Ցանկութեանը...
Գ. Հարկաւոր է։
Լ. Ուրեմըն
Չար է աղջիկդ։
Գ. Ո՛չ. սոսկալի ճակտի գիր
Մեղ ամենիս անվերջ լացի է մատնում։
Լ. Չար չէ, ասում ես, սակայն նա վառուում է
Անսուրբ բոցով։
Գ. Բայց այդ իրեն խիստ ցաւ է.
Ուստի փախչիլ պաղատում է նորանից։ —
Ուշքի եկաւ՝ թէ չէ, նորան ես, լըցուած
Ամօթով ու սըրտմըտութեամբ, քաշեցի
Աչքէդ հեռու. և, համարեա մոռացած
Թէ իւր հայրն եմ, մի նուիրական արձանի
Առաջ նորան դետնատարած ձըգելով՝
Շողացուցի սուրըս դըլխու վերայ, ախ,
Ըսպառնալով որ կը սպանեմ. զոյգ նըմին
Եւ կ'անիծեմ եթէ ըստոյգը չ'ասէ։
Աղեկըտուր հեկեկանքով խօսաւ խեղճն։
Լ. Եւ ինչ ասաց։
Գ. Արտասունքս ինձ խեղդում է։
Զաւակս է նա... — Վիրը թըրին դէմ արաւ,
Եւ չիտկած էր արտասուալից աչերը
Դէպ՝ իմ անթաց աչերն։ — Իսկ ես խիստ ձայնով,
Ցանցաւոր ես, պատասխան տուր, կանչեցի,
Ցանցաւոր ես... Ցաւիցը նա չըկըրցաւ
Մի խօսք անդամ արտաբերել... Ակամայ

Սիրտը ի գութ դորովեցաւ։ Ուրիշ կողմ,
Որ չըտեսնեմ Նորան, աչքըս դարձուցի,
Եւ ըզդացի՝ փաթաթուեցաւ ոտքերըս,
Ու ճակատը գետնին դըրած՝ Նա կերկեր
Ձայնով կանչեց. Անմեղիկ եմ ես, Հայրիկ։—
Երդու�։—Երդուում եմ... Եւ լըռիկ՝ ես աչքէս,
Սըրբում էի արտասունքս։—Անմեղիկ եմ ես,
Կըրկնեց երեք հեղ... Ըզդեցի ես սուրը.
Վեր հանի նրան ու սըղմեցի գըրկիս մէջ...
Նախատուած ու թշուառ հայր եմ, բայց հայր եմ։

Լ. Ո՛վ զայրուցք, ա՜հ։ Նորան սիրում, ու անմեղ
Է ինքն իրան Նա հրաչակում։ Ցոյս ունի
Աչքէս հեռու փաղի հետ վայելել
Սէր աւելի ուրախական. բայց ափսոս,
Ջուր է խաբուում։ Խոստանում է Նա սորան...
Իւր եանից Հրաւէրնա երթալու...
Ա՛յ մատնիչ քեզ... Ցակաւին իմ ձեռքումս էք։

Գ. Ցարդէ իմ այս ալեորեալ մազերըս։
Փըրկել Նորան՝ ինձ պէտք... քեզ այլ չըտես-
նել։(¹)

—

ՏԵՍԻԼ Դ.

ԼԱՆԶԻՈԹԹՈ, ՓԱՕԼՕ։

Լ. Ցառաջ արի, թշուառական։

Փ. Սովոր չեմ
Ա՛յդպէս կըծու խօսքեր լըսել։ Թէ ուրիշն

(¹) Գնում է։

Ըլնէր՝ ըզսպել կը գիտնայի։ Բայց քեզնում
Հօրըս պատիւն համբերութեամբ յարգում եմ։—
Հըպատակի թէ քո եղբօրդ ես խօսում։

Լ. ... Եղբօրս։—Ասա ինձ Փաօլօ. թէ որ Նա
Կինըդ լինէր, ու սիրան ուրիշը գողնար,
Եւ այդ գողցողն ըլնէր անուշ բարեկամդ...
Մարդ մի որ մինչ քեզ նենդութիւն էր անում,
Դու՝ զերթ եղբայր սեղմում էիր ըզրկումըդ...
Ի՞նչ կ՚անէիր Նորան։—Ա՛պա մըտածէ։

Փ. ... Ի՞նչ ծանր է քեզ կակուղ լինելդ, ըզդում եմ։

Լ. Ըզդում ես այդ. եղբայր, ըզդում ես որքան
Ծանր է ինձ այդ։—Մեր հայրն այստեղ յիշեցիր.
Կակուղ էր Նա իւր որդւոց հետ՝ անգամ իսկ
Երբ մեղաւոր գիտէր նոցա։

Փ. Դու միայն
Արժան էիր Նրան յաջորդել։ Ի՞նչ ունիմ
Քեզ ասելիք։ Ո՛հ թէ ինչպէս կոտրում ես
Խիզախ ոգիս։ Ե՛ս խ երբեմն մեծանձն
Եմ ինձ կարծում. քեզ համեմատ չեմ սակայն։

Լ. Ասա. թէ քո կինըդ՝ լինէր։

Փ. Փրանկիսկէն։
Ա՛հ, ստուերն անգամ չէի հանդուրժել տեսնելու
Ո՛ և իցէ նախանձորդի։

Լ. Իսկ եթէ
Եղբայրդ իշխէր սիրել Նորան։

Փ. Է՛լ եղբայր
Չէր լինիլ ինձ։ Վա՛յ Նրան սիրել իշխողին,
Վա՛յ էր Նորան, օ, հաւատա։ Մատնըչին

Պատառ պատառ կը բըրդէի դաշոյնովս։

Լ. Ինձ էլ գալիս է կատաղի այդ իղձը,
Ու ղըսպում եմ ձեռքս որ վազում է թըրիս.
Հաւատա՛ ինձ, հաղիւ հաղ եմ ղայն ղըսպում։
Եւ իշխում ես մեղքըդ վերադ հաստատել։
Գըլխէ՛ հանել այլոյ կինը, եղբըրկինդ։

Փ. Նըւազ անգութ կը լինէիր թէ թըրուդ
Տեղնուտեղը ինձ մորթէիր։ Վատարանց
Ջե՛մ, չըկարծես։ Ե՛ս, այն անմեղ երկնային
Հըրեշտակին գըլխէ հանած։ Բընաւ ո՛չ։
Վատարանց չէ՛ Փըրանկիսկին սիրողը.
Թէ և յառաջ լինէր այնպէս մէկը նա,
Նրան սիրելէն յետոյ լինել չէր կարող.
Վսեմանում է ամէն սիրտ՝ երբ մի հեղ
Այնտեղ դրոշմուած է այն վըսեմ Տիկինը։
Ես, վաստնղի նրան սիրում եմ, պարծում եմ
Թէ մարդասէր, առաքինի՝ ու քաջ եմ.
Եւ մանաւանդ նրան սիրելովս է թերևս՝
Որ աւելի այդպիսի եմ, որպիսի
Լինել սովոր չեն ո՛չ մարտիկ, ո՛չ իշխանք։

Լ. Եւ անամօթ քան ամէն մարդ դու ինքդ ես։
Համարձակում ես խըրոխտալ սիրովըդ։

Փ. Կըլըռէի թէ անարդար էր սէրըս.
Բայց մաքո՛ւր է սէրս՝ որքանև անհուն է։
Ցառաջ քան թէ արատել ղայն՝ կ'ընտրէի
Բիւր հեղ մեռնիլ։—Բայց և այնպէս..տեսնում եմ
Որ անշուշտ հարկ է գընալը։—Հրաժարիր
Տիկնոջդ համար՝ եղբօրէդ... և յաւիտեան։

Լ. Սէրդ անարդար չէ՞։ Եւ յաւէտ ինձ թըշուառ
Ջես անում դու... Ասենք մոռնամ սիրելի
Եղբայր մի ինձ ունենալը.. բայց կըրնա՞մ
Փըրանկիսկի սըրտէն քերել քեզ իսպառ։
Եւ իւր սիրտը, ուր և երթաս, տանիլ չե՞ս
Դու քեզի հետ... իսկ ատելի դարձած՝ ես
Պիտի ապրիմ նորա կըշտին։ Գըթած է,
Նա չի՞ ասիլ ինձ այդ բանը, չի՞ ասիլ.
Բայց ասում է սիրտս՝ որ նա ինձ ատում է,
Եւ, նենդաւոր, դու ես պատճառն ատելուն։

Փ. Խոստովանում եմ, ես նորան սիրում եմ...
Բայց Փրանկիսկէն... մի՞ կասկածիր, անմեղ է։

Լ. Խաբել անգամ կուզէիր ինձ։ Քո միտքըդ
Իմանում եմ։ Վախում ես որ մի դուցէ
Մի օր իրմէ, Փրանկիսկէէն, քէնս հանեմ,
Քո տարփածուէդ. և այդ իսկ այժմ աւելի
Բորբոքում է սըրտիս քէնը։ Ի՞նչ. միթէ
Ձեզ մորթելու չունիմ տեղիք։ Ես եմ, ես,
Թագաւորողն. և նենդըւած ամուսին
Ու նախատուած իշխան ես եմ։ Թող պատմէ
Համբաւն ինչ որ ուզում է իմ վերայօք.
Ձեզի համար, Նենդող եղան, պիտ՝ ասէ։

Փ. Կասէ համբաւն. ինչ մեղք ունէր փաղչոն,
Թէ պատանի՝ առաքուեցաւ Հռաւեննա,
Եւ չնաչխարհիկ կուսին սիրով հարուեցաւ։—
Իսկ ինչ է քո իրաւունքըդ իւր վերայ։
Նա քեզ երբէք տեսած չունէր. դու նորան
Լոկ պետական նըպատակով ուղեցիր։

Բընութիւնը իշխանորդոց էլ նոյնպէս
Մարդաբընոյթ իղձեր միթէ չըտրւաւ։
Քեզ առնելէն առաջ՝ նորա սիրտը դու
Ինչու մանրը չըքննեցիր։

Լ։ Այ ժըպիրհ,
Դեռ նախատինք նախատինքի ես բարդում։
Ո՛չ. դիմանալ կարող չեմ էլ։(¹)

—

ՏԵՍԻԼ Ե։

ԳՈՒԻԴՈ, ՓՐԱՆԿԻՍԿԷ ԵՒ ԱՌԱՋԻՆԳՆ։

Փր։(²) Հայր, ահա
Թրերն են հանում, տեսնում եմ։

Գ։(³) Կաց։—Աղէ դուք,
Խաղաղեցէք, ո՛վ զայրացած եղբայրտիք։

Փ։ Կեանքիցը վեր բանն ինձանից կորզեցիր.
Սակաւ փոյթ է ինձ արիւնը, թափէ դայն։

Փր։ Ի՛մ արիւնը թափէք. ես ձեզ դառնացրի։

Գ։ Ո՛վ իմ որդեակ։

Լ։ Պատկառելի դէմքն հօրըդ,
Ո՛վ ամպարիշտ, բաղդիցդ է՝ քեզ փըրկում է։
Կաց իւր գըրկում. վայ գըլխուդ՝ թէ քեզ թողնէ.
Որորանիդ պալատ լինելն կը մոռնամ.

(¹) Զեռքը թրին է տանում։
(²) Երեսէն առաջ։
(³) Նախ ուզում է յետ բռնել Ֆրանկիսին, յետոյ մտնում է Փաւլոի և Լանչիոթթոի մէջ։

Գերուց վատթար դեռնէ դեռին կըքարշեմ։
Վատհամբաւ է սէրդ. աւելի վատհամբաւ
Քան մի ըստրուկ՝ է իւր մարդուն նենգող կին...
Այս խօսքըն ինձ խելացընոր է անում։
Այնքան սիրեմ քեզ, ու պաշտեմ քեզ այնքան,
Ու վայր զարկես դու ինձ... Գոռող է սիրտը.
Մեթէ չիտես. սարսափելի գոռող է.
Եւ նորան այն անարգանքներն են դիպել,
Որոնց անկար է թէ ներեմ։ Պատիւս ինձ
Թոյլ չի տալ այդ... Պատիւ ասի. գիտես դու
Ի՞նչ է արդեօք այս անունը։

Գ։ Կաց։

Լ։ Պատուի
Ամենաղօր ձայնն եմ լըսում հոգուս մէջ.
Նա խօսելիս, ուրիշ ձայն էլ չեմ լըսում,
Եւ շողացնում սուրն ուր որ նա նըշանց տայ։

Փր։ Ա՛խ հայր, նա ինձ չի սպանում. հայր, դու սպանէ։

Լ։ Ցընորու�եմ... Դուք դողում էք... — Ո՛հ
Գուիդո.
Երբոր և իմ ալեորևան մազերըս,
Ու միտք բերեմ անցեալըս և սառնութեամբ
Նայիմ իմ հին լաւութեանցս ու ախտերուս...
Նոյնպէս յայնժամ յիշելով մի պաշտըւած
Ամուսին որ ինձ նենգում էր, պիտ՝ ըզդամ
Բոլոր այն հին յուսահատ ոխն իմ սըրտում,
Ու անիծելով, աչքըս չիրիմ՝ պիտ՝ փախչիմ,
Որ հոն ծածկեմ տառապանքըս։ Այլ՝ այդ օրն
Հասնելու չէ։ Անդութն այսօր դէպ դամբան

Ընտապեցնում է քայլս. արդէն ժըպտում է
Իմ մօտաւոր գերեզմընիս խորհըրդով.
Կ'ուրախանայ ոտքի տակ զայն կոխելով...
Իւր հետ ուրիշ մ' էլ գուցէ գայ կոխել զայն։ —

Փր. Տո՛ւր զօրութիւն, երկինք, որ տամ պատասխան։
Ե՞ս խուլ պատուի ձայներուն... Թէ Փաօլին
Սիրեցի ես, նրւաստ չէր իմ սիրուս բոցն։
Իտալական իշխան, ասպետ քաջարի,
Ուրիշ այլ ոչ մի բան չէր նա ինձ համար։
Թագաւորներ ու ազգեր էին նրան գովում։
Քեզ ամուսին չէի... Ա՛խ, ինչ եմ խօսում։
Արդար է քո բարկութիւնդ. ես երբէք
Սըրտէս հանել չը կըրցայ այդ նախկին սէրն։
Բայց և հանել կամեցայ զայն... Սոյն գաղտնեօք
Ես և մեռած կըլնէի՝ թէ Փաօլոն
Ցետ չէր եկել այժմ. հաւատա։

Փ. Թըշուառ կին։

Փր. Նրան միայն ներէ. ոչ տարփածուիս, այլ՝ եղբօրդ.
Ներէ եղբօրդ։

Լ. Աղաչանքդ Փաօլի
Համար է, հա։ Ո՛հ չարագործ։ Երկուսով
Այս պատերէն մըտածեցիք դուրս ելնել։
Խորհուրդ արիք միանալու իրար հետ։
Նա քու հօրէդ էլ քեզ խըլել խօսք տըւաւ...

Փ. Ա՛յ, ինչ ցած միտք

Լ. Ե՞ս ցած։ —Երթայ թող անգութն,
Այո՛, բայց քեզ այլ ևըս նա չի տեսնիլ։ —
Բըռնեն սորա չորս կողմը թող պահապանք։

Արքունիքէն դուրս ոտքըն այլ չը դընէ։

Փ. Բնաւ չեմ կարող ուտել այդքան անարգանք
Իմ հայրենի յարկի ներքոյ։(1)

Լ. Տէրդ եմ ես։
Թող ապըստամբ թուրը ձեռքէդ։

Փ.(2) Եղբայր... դո՛ւ
Ինձ զինաթափ անես... Ո՛հ, ինչ փոխուած ես։

Փր. Գո՛ւթ... — Փաօլո։

Փ. Փըրանկիսկէ։

Լ. Է՛ տիկին...

Գ. Ե՛կ. հեռացիր իւր բարկութեան երեսէն։

ՀԱՆԴԷՍ Ե.

—

Դահլիճաձև լոյս է տալիս մի լողոտէր։

ՏԵՍԻԼ Ա.

ՓՐԱՆԿԻՍԿԷ ԵՒ ԳՈՒԻԴՈ։

Փր. Ասա. Նորան հանդարտցուցիր։

Գ.(3) Ինձ տեսաւ,
Եւ անաբեկ՝ անկողնիցը վեր թըռաւ։ —
Աւաղ երկինք, կանչեց տըխուր, հասած է
Աղետալի արշալոյսը։ Մի թէ ես

---

(1) Ուզում է անձը պաշտպանել։
(2) Գահապաններէն նեղուած։
(3) Լանչիոտտոի սենեակներէն գալով։

Պէտք է կորցնեմ Փրանկիսկին... Ամէն միտք
Արդ փոխում եմ. առանց Նորան չեմ ապրիլ։—
Եւ այդ պահուն դառն արտասուք վազելով
Իջնում էին այտերէն վայր. ու անունդ
Տալով նա մերթ մոլեգնում էր, մերթ սիրով
Լցուած՝ ցաւում էր քեզ համար։ Ես Նորան
Երկար ատեն գրկացրս մէջ բռնեցի,
Եւ միասին հետն ողբացի, թոյլ տալով
Արձակ աղաւ չունչ իւր ցաւին։ Ապա թէ
Մեղմ խօսքերով սիրտն իջուցի, և նոյնպէս
Հաճեցուցի միտքն որ լաւ է դու երթաս
Առանց Նորան տեսանելու։ Դէ, երթանք։

Փր. Հայր, քաւ լիցի, եթէ հիմա չըտեսնեմ,
Այլ յաւիտեան Նորան տեսնիլ չունիմ ես։
Սրտումը քէն պահում է նա ինձի դէմ.
Ապահովուիլ ուզում եմ որ ներում է։

Գ. Հանդարտ եղիր։ Ներած է քեզ։ Եւ ներել
Փաօլին էլ խոստացաւ ինձ։

Փր. Ո՛վ ըսրկրանք։
Միայն խընդրեմ, սոյն նուիրական վայրկենին
Մի յիշեր ինձ այն մարդն, որին լիովին
Պարտ եմ մոռնալ... ցանկանում եմ և մոռնալ։
Արդէն քիչ թոյլ խօսում է նա իմ սրտում.
Արդէն կըրկին մէկ կորուսած լաւութիւնս,
Զեղջն, յիշատակ՝ հաւատարիմ ամուսնուս՝
Որ ինձ տըւիր և ես սիրել չըդիտցայ,
Ազդում են ներքս։ — Մի հեղ էլ թող խօսիմ
հետն։

Մի նեղանար։ Ստացիր ինձ այս չընորհն։
Անցած ապերախտութեանցս մասին զեղջս
Բոլոր բոլոր յայտնել Նորան ուզում եմ.
Ընկնիլ ոտքը, պաղատել՝ ինձ չ'անարդէ։
Գընա ուրեմն. ասա Նորան որ եթէ
Ես միւսանգամ իրեն տեսնել չունենամ,
Պիտի կարծեմ, աւաղ, որ ես երկընքի
Թողութենէն յոյսըս բոլոր պիտ՝ կըարեմ։

Գ. Շատ ուզում ես։ Նորան կբերեմ ես այստեղ։

—

ՏԵՍԻԼ Բ.

ՓՐԱՆԿԻՍԿԷ։

Ուրեմն ընդ միշտ, սիրեցեալդ իմ Հռիմինի,
Թողնում եմ քեզ։ Ո՛ղջ կաց, քաղաք սըրտամաքից։
Մընաս բարեաւ, բընակարան ապաւաղդ,
Բայց սիրելի։ Եւ սիրեցեալ որորան...
Ակաայորդոցն... Ի՞նչ եմ ասում։—Էդ անմահ,
Վերջին մաղթանքս ուղղում եմ քեզ տանս հա-
մար։
Թէև ես չար եմ, մի փակեր դու ականջդ։
Ոչինչ խընդրում չեմ ինձ համար. այլ միայն
Աղաչում եմ երկու եղբարցը համար.
Անհուն աջողդ հովանացիր նրանց գլխուն...
—Ո՞ւմ եմ տեսնում։

—

ՏԵՍԻԼ Գ.

ՓՐԱՆԿԻՍԿԻ ԵՒ ՓԱՕԼՕ։

Փ(¹) Ո՛վ դերագոյն խընդութիւն։
Արժանացայ մի անգամ էլ նրան տեսնել։—
Լսէ. մի փախչիր, թէ ոչ՝ կուգամ ետևիդ։
Փր. Ցանդուզն. ո՛հ ինձ. և ի՞նչպէս որ զինուած ես։
Փ. Պահապաններս ոսկու ուժով հեռացրի։
Փր. Նոր յանցանքներ. ո՛վ երկինք...
Փ. Ես գալիս եմ
Ցանցանքներու առաջքն առնել։ Հաւատա,
Ինձ դէմ եղբօրս նախանձ կիրքը յաղիլ չի.
Մըտածում է քեզ խողխողել։ Սոսկալի
Երկիւղ է այն՝ որ ինձ այստեղ քաշեց այժմ։
— Պահ մի չըկայ՝ քունն առել էր աչքերըս,
Մէկ էլ մի չատ դաժան տեսիլք տեսայ ես։
Թաթախուած քեզ արիւնումդ և կիսամեռ
Տեսայ, գետին ընկայ քեզի օգնելու...
Անունս էիր ասում ու կեանքըդ լուծում։—
Ո՛հ յուսահատ կատաղութիւն։ Ի զուր ես
Զարթնում էի. ահեղ երազն իմ աչքէս
Հեռանում չէ։ Տես, յիշելը սոսկ, ահա,
Մահուան քըրտինք է վազեցնում ճակատէս։
Փր. Հանդարտիր, օն...
Փ. Զայրացնած վեր ելայ.
Կաշառեցի պահապաններն անպիտան.
Առայ մի թուր... վախում էի մի գուցէ

(¹) Մոլեգնոտած ներս վազելով, մի մերկ թուր ձեռքը։

Քեզի կըրկին էլ չը տեսնիմ։ Իսկ այստեղ
Քեզ գըտնում եմ. երջանիկ եմ... Հրամայէ.
Ինչպէս որդրոիս, թագուհին ես և բաղկիս.
Քեզի համար, բաղձալի է ինձ մեռնիլն։
Փր. Ուշքըդ վերէդ ժողովէ, ո՛վ խելագար։
Այն մարդն, որին անարգում ես, մեզ արդէն
Ներում էր նա։ Փախիր ինձէն։ Ի՞նչ է յոյսդ։
Փ. Քեզ քու հօրդ հետ այս պատերէն դուրս ազատ
Ես ապահով չըտեսած՝ չեմ հեռանալ
Քեզանից, ո՛չ։ Ինձ՝ քու օրերուդ մասին՝
Ահեղ, տըխուր գուշակութիւն տանջում է։
—Ինձ չես սիրում։ Հրպատակուիլ վըճռել ես...
Փր. Այդպէս հարկ է։
Փ. Աստ ուրեմն. երբ և ուր
Դարձեալ իրար պիտ՝ տեսնենք մենք։
Փր. Թէ երկրում
Վերջ կ՛ունենայ... մեր այս ամպարիշտ սէրը...
Փ. Բընաւ երբէք... Ուրեմն այլ ես չենք տեսնուիլ։
Փրանկիսկէ, այս սըրտի վրայ դիր ձեռքդ։
Դոյն ձեռքն երբեմն յետոյ սըրտիդ կը դընես,
Եւ իմինիս բաբախմունքը միտք կ՛ածես.
Շատ սաստիկ են, կարճ կը լինին։
Փր. Ա՛խ սէր։
Փ. Քեզ
Կը պաշտէի. ու չէր անցնիլ բընաւ օր
Որ աւելի ու աւելի յարատև
Քեզ երջանիկ անել աշխատ չլինէի...
Դու ինձի հայր (ո՛վ մոգիչ միտք) կ՛անէիր

Քեզ նըմանող որդոց. այդ իմ որդոց ես
Կը խրատէի, յետ Աստուծոյ՝ քեզ պատուէր.
Եւ, ինչպէս ես սիրում եմ քեզ, սիրել քեզ։

Փր. Լոկ այդ խօսքերդ լըսելը յանցանք է։

Փ. Երբէ՞ք իմըս չես լինիլ...

Փր. Ի՞նչ ես խօսում։
Յաւետասպէս, եթէ հարկ է, ամուսնուս
Ու իւր վրսեմ վըշտերուն պիտ՝ ախտակրեմ։
Հանդիսաւոր լըսէ երդում աւասիկ.—
Թէ անիրաւ ճակատագիրը նորան՝
Առաջ քան ինձ՝ հողի դիրկը ուղարկէ,
Անվերջ պիտի այրիական պահեմ քօղն.
Եւ ոչ ըընաւ քեզ սիրելովս, միայն թէ դաղտ,
Կը դառնացնեմ յիշատակը նորա սուրբ։

Փ. Լաւ չ'իմացար իմ միտքըս. ես չար իղձեր
Ձեմ ըղձանում. թող ապրի և ըսպանէ
Իմ եղբայրս ինձ։ Այլ՝ դու միայն, Փրանկիսկէ,
Ա՛խ դու՝ հեռու իւր բարկութեան կըրակէն,
Ապրիր, ապրիր, և լուռումունջ սիրէ ինձ,
Այո...Տըխուր երաշներու մէջ ըսէպ
Կը տեսնես ինձ. իբր երջանիկ ուրուական
Ջօրուզիշեր, քեզ պաշտելով մըշտական,
Պիտի լինիմ միշտ անբաժան ես քեզէն։

Փր. Փաօլո...

Փ. Ա՛խ. մարդիկ, երկինք, մեզի դէմ
Թիստ բուռն եղան։

Փր. Հանդարտիր։ Վա՛յ իմ զըլխուս։

Մեր կորուստը պատրաստում ենք մենք՝... Ա՛խ։
հայր։(¹)

Փ. Այլ իւր զաւկի վերայ չունի իրաւունք
Մի հայր՝ որ նրան զոհեց իւր բուռըն կամքին,
Ո՞վ մանկական տարիներուդ ծաղիկը
Թառամեցուց դառն արտասունքի հոսանքում։
Ո՞վ սոսկալի այս հըրդեհը զայրացուց
Սըրտումդ, որով ողջ կիզուում ես... Այն քո
հայրն։

Փր. Ի՞նչ ես խօսում, ամպարիշտ...—Զայն եմ լը-
սում։

Փ. Ո՛չ ոք կըրնայ կորզել քեզ իմ գըրկիցը։

—

ՎԵՐՋԻՆ ՏԵՍԻԼ.

ԳՈՒԻԴՈ, ԼԱՆՋԻՈԹՈ ԵՒ ԱՌԱՋԻՆԴԷՆ։

Լ. Ի՞նչ եմ տեսնում. ո՛հ։ Փաօլո՞ն... Ներնդած են
Իմ պահապանքն ինձ... Ո՛վ զայրույթ. և դու
Ո՛վ Գըվիդո, վրկա՞յ լինել կանչեցիր (ինձ,
Այսքան ամօթ նախատինքի։ Նա դիտմամբ
Քեզ ինձ ղըրկեց։ Փախչիլ սոքա կամ ինձ դէմ
Ապըստամբիլ կամեցան. զոյգն էլ մեռնին։(²)

Փր. Ո՛հ. չար կասկած։

Գ. Դու, ապիրատ իմ աղջիկ,
Հարկում ես ինձ անիծել քեզ։

(¹) Դանչելով։
(²) Մերկացնում է թուրը, և կռուում է Փաօլոի հետ։

Փ. Ամէնքն էլ
Ո՛վ Փրանկիսկէ, ատում են քեզ. ինձ միայն
Ունիս պաշտպան։
Փր. Դադարեցէք, ով եղբարք.
Ե՛ս կ՚ընկնիմ ձեր սրբերու մէջ։ Ես միակ
Եմ մեղաւորն...
Լ. Մեռիր։[1])
Գ. Վա՛յ ինձ թշուառիս։
Լ. Եւ դու անձրդ պաշտպանէ, վատ։
Փ. Զարկ։[2])
Գ. Այդ ինչ
Արիւր։
Լ. Երկինք. այս ինչ արիւն։
Փ. Ո՛հ...Փրանկիսկէ..
Փր.[3]) Ա՛խ հայր... հայր, ինձ...անիծեցիր...
Գ. Որդեակ իմ,
Ներում եմ քեզ։
Փ. Փրանկիսկէ... ահ... ներէ ինձ...
Ե՛ս պատճառն եմ քու մահուանդդ։
Փր. Անվախճան...
Տանջանք... այն դին...վա՛յ ինձ...մեղ են ըսպա-
սում...
Փ. Անվախճան կըլինի մեր սէրն... Հոգին տուեց...
Մեռնում եմ ես...

---

[1]) Խոցում է նորան։
[2]) գետինն է ձգում թուրը, և թողնում է իրեն խոցելու։
[3]) Շունչը տալիս։

Լ. Հոգին տուեց։—Ո՛վ փաղչ։—
Ո՛հ, այս երկաթն ինձ դու տըւիր... Թող մընաւ
Իմ սիրտըս։
Գ. Կա՛ց, քուկդ իսկ է այդ արիւնը.
Եւ հերիք է, որ Արեը փոքր յետոյ
Սոսկայ մընայ միւս հետ յերկիր ծագելիս։

FRANCESCA

DANTE.

Ֆրանչէսկա.

Ես ըսկըսայ. Գերթող, սիրով այն երկսին՝
Որ զընում են միասին՝ կը խօսէի,
Եւ որ քամուն այնչափ թեթեւ են երևում։
Ու նա ինձի. Երբ մօտենան՝ կը տեսնես.
Դու այն ատեն նոցա տանող սիրովը
Խընդրէ նոցա, նոքա կուգան։ Իսկոյն որ
Քամին նոցա դէպի մեր կողմը բերեց,
Ձայն հանեցի. Ո՛վ ցաւակիր հոգիներ,
Թէ չկայ արգելք, եկէք մեզ հետ խօսելու։
Տարփատենչիկ աղաւնեաց պէս, որ դէպի
Քաղցրիկ բոյնը թևատարած գալիս են
Օդի միջով, կամքէն մղուած, այնպէս և
Խքմբի միջէն, ուր Դիդէն էր, ելնելով
Դէպ մեզ եկան ձախող օդը կըտրելով,
Այնքան զօրեղ եղաւ գրթոտ ձայնը իմ։

Ո՛վ չնորհաշուք և բարեմիտ չընչաւոր,
Որ այս աղօտ օդի միջով մեզ եկար,
Որ արիւնով այն աչխարհը ներկեցինք,
Թէ տիեզերքի Աքքայն մեզ հետ հաչտ լինէր,
Մենք նորանից կը մաղթէինք քու բարիդ՝
Որ ըզգացիր դութ մեր դառուն աղետքէն։
Ինչի վերայ լըսել՝ խօսիլ որ կ՛ուզէք,
Մենք կըլըսենք ու կուտանք ձեզ պատասխան,
Քանի քամին, ինչպէս ահա, հանդարտ է։
Այն երկիրը, ուր ծընուած եմ, ընկնում է
Ծովի ափին, ուր փօ հետ իւր ընկերաց
Խաղաղուելու համար դալիս իջնում է։
Սէրն, որ ազնիւ սըրտում երադ վառուում է,
Բըռնեց սորան իմ դեղեցիկ անձովը
Որմէ զըրկուայ, և ինչպէսն ինձ դեռ ցաւ է.
Սէրն, որ սիրել ներում չէ մի սիրուածի,
Այնքան հըզօր հնչաով կապեց ինձ սորան,
Որ հիմի էլ, ինչ տեսնում ես, չէ թողնում.
Սէրը մէկտեղ մէկ մահի գիրկ տարաւ մեզ.
Կայենն է մնում մեր արեր կըտրողին։
Այս խօսքերը նոցանից մեզ բերուեցան։
Երբ վըշտահար անձանց խօսքը լըսեցի,
Կախեցի գլուխս 'և այնպէս երկար մընացի,
Մինչև Քերթողն ասաց. ինչ ես մըտածում.
Երբ պատասխան տուի, ասի. ոհ, աւաղ,
Ո՛րքան քաղցրիկ մըտածմունքներ, որքան իդձ
Տարան սոցա դէպ ցաւալից օրհասը։
Ցետոյ դէպի նոցա դարձայ խօսեցայ,

Եւ ըսկըսայ. Ֆըրանչէսկայ, քու վըշտերդ
Ինձ գորովի ու տըխրութեան լաց բերին։
Բայց ասա ինձ, քաղցր հեծութեանց ժամանակ,
Ո՞ւմ և ինչպէս զիջաւ Սէրը, որ գիտցաք
Երկբայելի ցանկութիւնքը։ Ու նա ինձ.
Ոչինչ այնչափ ցաւալի է, որքան որ
Թըշուառութեան մէջ երջանիկ ժամանակն
Յիշատակել, և այդ գիտէ քու Վարպետդ։
Բայց թէ փափագ ունիս այդքան մեր սիրոյ
Բուն իսկ ծագումը իմանալ, ասեմ քեզ
Իրրեւ մարդ՝ որ լալիս ու ասում է։
Կարդում էինք աւուր մէկը, առ հեշտի,
Թէ սէրն ինչպէս Լանչիլոտին կապկապեց.
Միայն էինք և առանց մի կասկածի։
Այդ կարդմունքը մեր աչերը շատ անգամ
Հըրապուրեց, և դունատեց երեսներս,
Բայց մէն մի կէտ եղաւ մեզի յաղթողը։
Երբ կարդացինք թէ խանդաղատ ժըպիտը
Համբուրուեցաւ այնքան սիրող սիրեկնէ,
Սա որ ինձէն բաժանուելու չէ երբէք,
Դողդըղալով համբուրեց իմ շրթունքը։
Գալէոտտօ էր գիրքն՝ ուրբս գրողը.
Էլ այն օրը չկարդացինք աւելի։
Մինչ մէկ հոգին ասում էր այս, երկրորդը
Այնպէս աղի լաց էր լինում, որ ցաւէս
Կարծեցի թէ՝ ահա հիմա կը մեռնիմ,
Եւ ընկայ զերդ մեռած դիակն է ընկնում։

Դանթէ գրէրէ. Երգ Ե։

ALL' ITALIA
LEOPARDI.

—

ԱՌ ԻՏԱԼԻԱ

Հայրենիքդ ես, այս մեր նախնեաց, ահա պարիսպ, կա-
(մարներ,
Եւ ամայի աշտարակներ, և այս կոթող արձաններ,
Բայց վառքն ուր են, չեմ տեսնում,
Չեմ տեսնում ուր դափնին, երկաթ՝ որ ունէին մեր պա-
(պերն։
Այժմ ապազէն, ճակատդ մերկ, մերկ և կուրծքդ ես ցոյց
(տալիս։
Վա՛յ ինձ, որքան վերքեր այդ,
Ի՞նչ դալկութիւն, ինչ արիւն, օհ, քեզ որպիսի եմ տեսնում,
Զբաղնած տիկին։ Հարցնում երկինք, գետինք հարցնում.
(Ներան այդպէս
Ո՞վ արաւ, ով, ասացէք։
Եւ վատն այն է՝ շղթաներով կապուած են զոյգ ձեռները,
Որ ինքն անքօղ մաղերն արձակ, անմրխիթար, անար-
(գուած՝
Խեղճուկ նըստած է գետնին,
Դէմքը ծընկացը մէջ պահած՝ աղիողորմ լալիս է.
Լաց լաց, իմ Ջան Իտալիա. լաց որ ունիս լալու տեղ,
Ծընուած՝ ազգաց յաղթելու
Թէ բարերաստ, թէ չարաբաստ ատղիդ տակ։

Թէ լինէին աչերդ երկու աղբերակներ կենդանի,
Լացն հաւասարիլ կորբստիդ ու նախատինքիդ չէր կարող.
Չի դու տիկին էիր յառաջ, իսկ այժմ ես խեղճ աղախին։
Ո՞վ կայ մասիդ խօսող ու կամ ողբող ով,
Որ՝ յիշելով այն քո անցած փառք ու պարծանքդ՝ չ՛ասէ.—
Կար ժամանակ՝ մեծ էր, իսկ արդ այլ այն չէ։—
Ինչու, ինչու, ուր է դնացել այն հինաւուրց քո ուժդ.
Ո՞ւր են զէնքերն ու քաջութիւն ու յարատև կամքն ուր։
Թուրը մէջքէդ ով քանդեց։
Ո՞վ քեզ մատնեց։ Այն հրպիսի հընարք ու կամ որ ճիղն,
Կամ որ այնքան զօրութիւն
Կրցան քեզնէն կորզել ոսկի վարսակալդ ու ծիրանիդ։
Ի՞նչպէս ընկար և կամ ենր
Այնքան բարձրը բարձրութիւնից՝ այդքան ըստոր անարդ
(վայր։
Ո՞չ կրառում է ոք քեզ համար. քոյիններից քեզ պաշտպան
Զրկմ մէկը։ Զէնքերն, այստեղ տրէք զէնքերն, ես միայն
Ֆիտի կրառիմ, պիտի ընկնիմ ես միայն։
Տ՞ուր ինձ, երկինք, որ իմ թափուած արիւնս
Կրակ դառնայ իտալական լանջայ մէջ։

Ողղիզդ ուր են։ Զէնքի շաչիւն, շառաչ ղրղորդ կառքերու,
Ձայնի գոռումն ու գանչ գոռող պրդընձներու եմ լսում.
Ողղիզդ օտար գաւառներում են կրառում։
Ո՛ւշ դիր, ուշ դիր, Խալիա։ Տեսնում եմ կամ թրում է,
Ամբոխասատ ծրփանք հետի և ձիաւոր զօրքերու,
Դուս ու փոշի, շողիլ շողալ պողովատիկ սրերու,
Ձերթ փայլատակ՝ ամպոց մէջ։
Բայց սակայն չես մրսիթարուում. և ահարեկ աչերդ
Երկրայական արկածին կողմ չես դիմանում շրջելու։
Ինչի համար այն հեռաւոր դաշտերու մէջ կրառում է
Իտալական եւի արիւն։
Ո՛վ աստուածներ, ով աստուածներ. ուրիշ աշխարհի հա-
(մար

Կրառում են կուռ իտալական պողպատներ։
Եղուկ թշուառ այն մարդուն որ կրառի դաշտումն է մեռ-
(նում,
Ո՛չ հայրենի հողին համար, ոչ իւր պարկեշտ կենակցին
Ու ոչ սիրասուն որդոց համար,
Այլ՝ օտարի թշնամու դէմ, օտար աղգերու համար.
Ու կարող չէ հողին տալիս ասելու.
Ո՛վ կենսատու մայր երկիր,
Կեանքն՝ որ ինձի տուիր, ես նոյնն ահա քեզի եմ դարձնում։

Վաղ երջանիկ և սիրելի և օրհնեալ հին դարեր դուք,
Ուր աղդերը վազում էին դէպի մահը գունդագունդ՝
Հայրենիքի սիրովը.
Եւ մանաւանդ ով մշտապէս յարգուած ու փառահեղ
Թեսալական կրճեր դուք,
Ուր Զարսկաստան ու գիր-բազդին տրկարացան բովանդակ
Բուռ մի կրտրիճ, ազատասէր, արիասիրտ հոգու դէմ։
Կարձեմ բոյսերն ու քարերը, ալիքն ու ձեր սարերը
Անց-դարձուորին խուլ բարբառով ղրրուցում են թէ ինչ-
(պէս
Անյաղթելի դընդերն իրենց՝ Ցունատանին անձնաղոհ՝
Մարմիններով այն ափերը ծածկեցին։
Այն ժամանակ վատ և դաղան Գսերքսէսը փախչում էր
Հելլեսպոնտի վերայով,
Եկող սերընդի առաջև խաղք խայտառակ լինելով.
Եւ Ամթելա բրի վերայ, ուր սուրբ գունդը մեռնելով
Մահն իրանից յետ մրղեց,
Սիմոնիդէս ելնում էր,
Երկինք, գետին ու ծովն աղի փոփոխակի դիտելով։
Եւ արտասուքով երեսները երկուսն ևրս լրացած,
Կուրծքը սաստիկ ելևէջով և տանելը դողդոջուն
Ձեռքն էր առնում քընարը.
Գերերջանիկ մարդիկ՝ որ ձեզ արև տրուզի սիրուն՝

Սըրտով տըւէք կուրծքերըդ դէմ այն թըշնամի տէգերուն.
Երանի՜ ձեզ, որոնց ունի Հելլենաստան իւր ծոցում,
Եւ տիեզերք հիանում են ձեր վերայ։
Զէնքերու դէմ, վըտանգներու դիրկն ոռպիսի սէր էր այն
Որ յորդորեց առաւ տարաւ պատանեկան մըտքերը,
Այն ոռբան սէր՝ որ ձեզ քաշեց անդութ օրհասի դիրկը.
Ի՜նչպէս այնքան յետին ժամը երևեցաւ ձեզ զըւարթ,
Որդեակք իմ, որ ուրախ ուրախ վազեցիք
Արտասուալից ու խիստ վազքն։
Թըւում էր թէ ամէն մէկը ձեզնից պարի, ՝ւ ոչ դէպ մահ,
Եւ կամ շըքեղ կոչունք՝ եկած գընում էր.
Բայց ձեզ մըթին Տարտարոսն ու մեռոտ ջուրն էր ըսպա-
(սում.
Եւ ո՛չ էին ոչ կողակից և ոչ որդի ձեր մօտը,
Երբ վայրենի ծովեզերքի վերայ առանց համբոյրի
Առանց ջերմիկ արտասունքի մեռաք դուք։
Բայց ոչ առանց Գարիպիներուն ահեղասաստ պատուհաս
Եւ անվախճան տանջանք բաժին թողնելու։
Ինչպէս ռաւած ցուլի նախրի մէջ մըտած,
Մէկ թըռչում է սորա քամակն ու ժանիքով քըրքըրում
Թիկունքն, ու մէկ միւսի կողերն ակօս ակօս պատառում,
Մէկ, երրորդի աղղրները պատառ պատառ ձըրձըռում,
Ա՛յնպէս պարսիկ զընդերու մէջ բորբոքուում էր մոլեգնօտ՝
Ցոյն կուրծքերու բարկութիւնն ու քաջութիւնը մեծագործ։
Տես հա թիկանց վերայ շըրջած ձիաներ ու ձիաւոր,
Տես փախչելու տագնապի մէջ կառք ու քանդուած վըրան-
(ներ
Ու սըրտաթափ յաղթըւածներն իրար խառնուած շաղ-
(ուըած,
Եւ առաջին փախչողներու մէջ ինքն ահա բըռնաւորն՝
Գոյնը թափած, մազերն անկարգ ու խառնակ.
Տես բարբարոս արիւնի մէջ թաթախուած ու ներկըւած
Ցոյն դիւցազներն, անվերջ ցաւի առիթ դարձած Գարսերուն,

Փոքր առ փոքրը յաղթըւելով արիւնահոս վէրքերէն,
Ընկնում են մին միւսի վերայ. ո՛ շատ ապրիք, շատ ապրիք.
Գերեզմանիկ դուք, մինչ երկրում խօսում դրում են ձեր
(վերայ։

Նախ քայքայուած, դէպի ծովը դարահոս,
Անդունդքի տակ շառաչմունքով անլոյս կ՚ընկնին աստղերը,
Գան ձեր սէրն ու ձեր յիշատակն անցնի կամ թէ նըւազի.
Ձեր շիրիմը բագին մի է. և պիտ այստեղ գան մայրերն
Իրենց որդոց ձեր գեղեցիկ արեան հետքը ցոյց տալով։
Իսկ ես ահա խոնարհուած, ո՛վ օրհնեալ ոգիք, մինչ դետին,
Համբուրում եմ սոյն քարերը, համբուրում եմ կոշտերը,
Որ միշտ դոլուած ու միշտ պայծառ յաւետապէս պիտ լի-
(նին
Ծագէ ի ծագ աշխարհի։
Ա՛խ ուր էր թէ ձեզ հետ մէկտեղ այս դետնի տակ լինէի,
Եւ կակղանար իմ արիւնովս այս պանծալի սուրբ հողը.
Իսկ թէ այլ է ճակտիս գիրը, և չի շնորհիլ ինձ որ ես
Յունաստանի համար փակեմ այս իմ մեռոտ աչերը
Պատերազմում ընկնելով,
Երանի թէ յետնոց մօտը, աստուածներու ուղելով,
Ձեր գերեզմանի պարկեշտ համբաւն մինքան տեսել կարե-
Որքան տեսէ պիտ՝ ձերը։ (նար

ԼԷՕՓԱՐԴԻ։

Տարօնոյ Ծերը։

(Բանգում, Թուրքաց ձեռքը դերի)։

Եւ ես որոճում ու ասում էի.
—Ո՞ւր էք թափառում ով իմ խորհուրդներ,
Տանջված սիրտիս տալիս նոր հոգսեր.
Ինչու այդ ուղեցդ այդպէս բաց անել
Վարագոյր կեանքիս, որ վաղ է անցել։
Կարծում էք որ հին փառքըս ցոյց տալով
Կ՚ամոքէք վէրքըս՝ ցաւըս կակղելով.
Բայց Մահ, ժամանակ ինձ այնպէս արին՝
Որ այլ չ՚օգնել ինձ փառքն իմ անցեալին։
Մահն ինձնից խլեց իմ հզօր որդիք,
Ժամանակն արաւ ինձ իւր նախատինք.
Իմ պաշտպան որդիք չկան. Թաղուեցան,
Իսկ իմ ուժ մարմնի՝ ու աչքի լոյս կորան։
Թոռ ու թոռնուհի անտէր մընացած՝
Դրռնէ դուռ փընտռում են պատառ մի հաց.
Տունըս էլ չկայ, կայքս առին տարին,
Խեղճուկ ծերունուս՝ մոխրին նըստուցին։
Տեսէք դուք ահա հարիւր ու յիսուն
Տարիքն են սահել գլխիս երերուն,
Կար մի ժամանակ ես ուրը Թուրքի
Չէի բնաւ ասում թէ ունին հոգի.
Իսկ արդ անպիտան մի Քուրդ է թէ Թուրք
Ակեոր մազիս արձակում է Թուք։
Հոգիս զայրացած՝ ձեռքըս եմ չարժում,

Բայց և այդ ծեր ձեռք չըղթան է կապում.
Աչքս եմ ոլորում դէպ իմ թոռներուն,
Բայց նոքա ցըրիւ՝ ու հաց են փընտռում,
Մըզկտում է այդ ժամ սիրտս ու փըլում,
Առուի պէս արտասունք աչքիցս վազում։
Բայց չէ՞ որ Հարամն էի՝ Մըշու քաջ,
Անիրաւ ու դող չէր գալ իմ առաջ.
Իսկ հիմիկ անունս անգամ չեն յիշում
Նոքա, որ կաթ կաթ արիւնս են քամում։
Զեն յիշում լինելս Աղա հոզատէր,
Շատ էին մըշկներս՝ ու շատ դութընները,
Գինի, ցորեն, բուրդ. եղ, արջառ ու կով,
Խընուսի ձիանք, գոմէշն իր ձագով
Լցընում էին տունս, ու արօտ պայծառ՝
Ուր աղբիւր ու գետ գլորուում էր հաղար։
Կամքս էր յարգըւած, տունս էր շատ մեծ,
Ուրիշ հոզատէրք նըստում էին ինձ հետ։
Իմ լեզուով խօսող, արեսոլս երդուող՝
Շատերը կային խորհըրդիս լըսող.
Իսկ հիմա լըռուել է ամէն լեզու,
Ցամքել ըզգայմունք բոլոր սըրտերու։
Շահաքաղց գայլեր չորս դիս հաւաքուած,
Այս ծերուկ գըլխուս՝ աչք իւրանց տընկած.
Ատուած, թէ վերցնես աչքդ ինձանից,
Քուրդ՝ Թուրք կը կըտրեն արեն իմ աչքից։

Արեւ... ինչ արև փըլփըլած ծերիս,
Սև ու մութն եկել վայ տըւել գըլխիս...
Դէթ դար մէկն սաէր. բարեկամ, բարեւ.
Գուցէ դառն աչքիս՝ քաղցրանար արեւ։
Բայց ո՛չ, ոչ. ահա մի մեծ անապատ,
Անապատ մարդու, սըրտի անապատ.
Միայն եմ լացող, չըկայ ցաւակցող,
Միայն բուն անյոյս՝ տըխուր երդակցող։
Սակայն և այդպէս՝ ապրելու խղճս

Մեռած չէ. այդ է ճակատի դիրքս։
Ալեոր կուրծքիս մէջը կայ մի կայծ,
Կայ մի զօրութիւն, մի կամք չըմարած...
Բայց մի վէրք՝ որը միայն յիշելիս՝
Սարսում եմ բոլոր մարմնով ծերունիս,
Որ անդութ մատով կարծում եմ մէկը
Ցոյց է տալիս ինձ գերեզմնի մէջը,
Կոտրում է ջըլերս ու խորշում ճակատս
Թափում է քըրտինք պաղպաղ ջըրի պէս.
Է՛հ, Աստուած բարի. ծընուած արիւնը
Անխիղճ մոռնում է ծընող արիւնը...
Ո՛վ որդիք, անդութ ժամը ձեզ ցըրուեց,
Այդ երկաթ ձեռքը ձեզ ինձնէ բաժնեց,
Օտար աստղի տակ նա էր ձեզ քըշեց,
Օտար ձեռքերու նա կարօտ թողեց.
Ձեր հարը չըկայն որ ձեզ պահէին,
Ինձ յանկարծ կապել էր զօրքը թուրքին։
Մեղքն իմը չէ՞ որ դուք թափառում էք,
Անիրաւ Բաղդէն լոկ՝ դանդատ արէք։
Բայց ձեր այդ հանճար, ձեր գեղեցկութիւն՝
Որով փայլում էք, ըզմայլեցընում
Նոյն իսկ խեղճ կեանքում, վատթար աստղի տակ,
Այդ բոլորն, որդիք, ինձնից ըստացաք։
Սակայն քաշուում էք անունովս յիշուիլ,
Խորշում ձեր պապի լեզուովը խօսիլ։
Բայց դուք մոռանում, կամ դեռ տըզէտ էք
Որ տալիս էի դոյն լեզուով օրէնք...
Իսկ դուք արդ խոտոր, ականջով՝ սրրտով,
Անընդդատ հարբում Դալիլեան գինով։
Ըզգոյշ, ով որդիք. սիրան օտարածին
Ձեզ կ'որսայ միայն յոգուտ իւր չահին.
Իսկ ջերմ սէր միայն և անեղծ անուն՝
Ցետ դարձէք գընանել հայրենի ծոցում։
Հուսկ ով իմ ուսաերք 'ւ աչագեղ գըսաերք,
Հեռու չէ ժամը՝ կը լըցուին այերք

Սուրբ Կարապետու տըխուր զօղանջով.
Արէք ժողովուէք ձեր ծեր պապի քով.
Մըխիթարեցէք ալևոր ծերիս,
Որ ձեզ կեանքս, ու Աստծուն՝ կ՚աւանդեմ հոգիս..

Բայց դեռ ուշանում են նոքա, ով Տէր...—

Ու յետ հաւաքած իմ ցըրիւ մըտքեր,
Աչքս եմ բաց անում ու տեսնում՝ միայն
Ներստած եմ բանդում ու թուրք պահապան
Ցեռ յառաջ գալիս գընում ժանտաղէմ,
Որ կարծես լինի հոգեհանն ինձ դէմ։
Աչքըս դարձուցի միւս կողմ, տեսայ՝
Փոքր լուսանցքէն դէպ դաշտ վերայ,
Թուրքն իմ ձին նըստած, թուրք՝ դաշտըս վարում.
Երկուսն էլ աղատ, դոհ, իւրեանց կեանքում։

1876։

Վ. Ե Ր Ջ։

Հ. Ազգային գրադարան
NL0340995